

ՀՐԻԵՎԱՇԵԶ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՄԱՐՏԾՎԱՆ ԿԱՆՈՆԸՆԴԻԲԸ

(ՀՊՄԿ — 1940 թ.)

628
Հ-99

ՀՐԻԵՎԱՇԵԶ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ
ԱՐՁՈՒԹՅՈՒՆ

04 AUG 2010

628
2-99 "y".

ՀՐԴԵՀԱՇԵԶ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՄԱՐՏԱԿԱՆ ԿԸՆՈՆԾԳԻՐՔ

(ՀՊՄԿ — 1940 թ.)

ԽՍՀՄ ՆԳԺԿ ՀՐԴԵՀԱՇԵԶ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎԱՐ
Վ Ա Ր Չ Ո Ւ Բ Յ Ց Ո Ւ Ն

13.960

17.06.2013

ՀՐԱՄԱՆ

ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻ

1940 թվի

ԲԼՎԱՑՑԱԿՈՒ ԲՅՈՒՆ

№ 86. ԽՍՀՄ ՆԳԺԿ ՀՐԴԵԿԱՉԵՂ Պահպանության 1940 թվի
Մարտական Կանոնագիրքը հրապարակելու մասին

№ 86. 1940 թվի փետրվարի 10, Մասկվա բաղադր:

1. Գործողության մեջ մտցնել ՆԳԺԿ ՀՐԴԵԿԱ-
ՉԵՂ Պահպանության հրապարակված Մարտական
Կանոնագիրքը (ՀՊՄԿ—40):

2. ՆԳԺԿ հրդեկաչեղ պահպանության ամբողջ
անձնակազմին՝ ղեկավարվել ՀՐԴԵԿԱՉԵՂ Պահպա-
նության Մարտական Կանոնագրքով:

3. Նշված կանոնագրքի ցուցումները կիրառել՝
խստորեն հաշվի առնելով հրդեկի իրադրությունը:

4. Հրդեկաչեղ Պահպանության 1937 թվի Մար-
տական Կանոնագրքի նախագիծը — համարել
չեղյալ:

ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ԺՈՂՈ-
ՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻ ՄԵՂԱԿԱԼ
գիվերամ ԶԵՐՆԻՇՈՎ

(ԽՍՀՄ ՆԳԺԿ ՀՐԴԵԿԱՉԵՂ Պահպանության Գլխա-
վոր վարչության գծով):



ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հօդ. Ա. Հրդեհաշեջ պահպանության նպատակն ե՝ հրդեհից պաշտպանել սոցիալիստական անվականությունը և Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության քաղաքացիների անձնական գույքը։

Հրդեհաշեջ պահպանության մարտիկների և հրամանատարների առաջնակարգ պարտականությունն ե՝ անհապաղ ոգնություն ցույց տալ մեր մեծ հայենիքի քաղաքացիներին, յերբ հրդեհի վայրում սպառնալիք և ստեղծվում նրանց կյանքի համար, ինչպես նաև տարերային աղետների, կատաստրոֆաների ու ավարիաների ժամանակ։

Հօդ. Զ. Կրակի դեմ պայքարելու միջոցները և ժամանակակից տեխնիկական սպառազինությունը թույլ են տալիս հանգցնելու բոլոր հըրդեհները, ըստ վորում վնասները հասցնելով նվազագույն չափերի։ Կրակի դեմ պայքարելու միջոցների, տեխնիկական սպառազինության բազմազանությունը, նրանց ամբողջ բարդ փոխներգործությամբ, հրդեհաշեջ պահպանության անձ-

Նակազմից պահանջում են գերազանց կերպով
յուրացնել տեխնիկան և այն հմուտորեն գործադր-
բել հրդեհ հազցնելու ժամանակ:

Հոդ. Յ. Հրդեհը հեշտ ե լիկվիդացիայի յեն-
թարկել, յերբ նա նոր ե սկսվել: Դրա համար ել
հրդեհը լիկվիդացիայի յենթարկելու բոլոր մար-
տական գործողությունները պետք ե կատարվեն
առավելագույն արագությամբ, կազմակերպվա-
ծությամբ, ուժերի և միջոցների նվազագույն
ծախսումով:

Հոդ. Ա. Հրդեհը հանգցնելու ժամանակ հրդե-
հաշեց պահպանության հիմնական խնդիրն ե՝
վճռական և անընդհատ հարձակում գործել գլխա-
վոր հարվածը հասցնելով կրակի առավել տարած-
ման ուղիներին, լիովին շրջապատել և հանգը-
նել այրման ուժեղ ոչախները՝ մինչև հրդեհի լիա-
կատար լիկվիդացիան:

Հոդ. Ա. Ամեն տեսակ հրդեհ հանգցնելու ժա-
մանակ հաջողության հասնելու համար պահանջ-
վում ե.

1) հրդեհաշխջման հիմնական ուժերն ու մի-
ջոցները կենտրոնացնել հրդեհի ամենազլիավոր
տեղամասերի վրա, դրանք ժամանակին գործի
դնել և անխափան աշխատեցնել

2) հրդեհը հանգցնելու պլոցեսում ամբողջ
հրամկազմի կողմից ճիշտ կառավարել ստորաբա-
ժանումները,

3) մարտիկների կողմից արագությամբ, ճշո-
րեն և նախաձեռնությամբ կատարել հրամանա-
տարի (պետի) բոլոր կարգադրությունները,

4) հրդեհաշեց պահպանության մարտական
ստորաբաժանումների անձնակաղմի բարձր գի-
տակցությունը, համարձակությունը, խիզախու-
թյունը և վճռականությունը:

Հոդ. Յ. Հրդեհի դեմ հաջող պայքարելու հա-
մար մեծ նշանակություն ունի մարտիկների և
հրամանատարների ցուցաբերած անձնական նա-
խաձեռնությունը: Հրդեհաշխջման դեկավարի վո-
րոշումը ըմբռնելու և այն կատարելու լավագույն
յեղանակը դատման վրա հիմնված խե-
լացի նախաձեռնությունը պետք ե ամեն կերպ
խրախուսավի և ոգտագործվի:

Հոդ. Յ. Հրդեհի վայրում կատարվող աշխա-
տանքը հսկայական բարձրության և հասցնում
մարդու—մարտիկի գերն ու նշանակությունը:
Նրա բարոյական և ֆիզիկական ուժերին ներ-
կայացվում են մեծ պահանջներ, դրա համար ել
մարդ—մարտիկի մասին հոգ տանելը պետի ա-
ռաջնահերթ պարտականությունն ե, նրա ուղ-
ղակի պարտքը: Իր ստորագրյալներին ճանաչելը,
մշտական անձնական շփումը նրանց հետ, նրանց
կյանքին ու կարիքներին ուղղվիր լինելը, նրանց՝
Լենինի-Ստալինի կուսակցությանը նվիրվածու-

թյան վոգով, հրդեհի մարտական պայմաններում
աշխատելու ժամանակ անձնազոհություն ցուցա-
բերելու վոգով զաստիարակելը — պետի համար
կապահովեն ստորաբաժանումի մարտական միա-
ձուլությունը, նրա քաղաքական կայունություն-
նը և հետեաբար, մարտունակությունը և հաջո-
ղությունը՝ հրդեհը հանգցնելու ժամանակ:

Գ Լ Ո Ւ Խ Ա Ա

ՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՅԵՎ ՀՐԱՄԱՆԱՏԱՐՆԵՐԻ ԸՆԴ- ՀԱՆՈՒՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՐԴԵԼԸ ՀԱՆԳՅԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ

1. ՄԱՐՏԻԿԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդ. 8. Հրդեհ հանգցնելու աշխատանքը մար-
տիկից պահանջում և մեծապես լարել բարոյա-
կան և ֆիզիկական ուժերը, հաստատակամու-
թյուն ցուցաբերել և լավ մարզված լինել:

Իր խնդիրները կատարելու համար մարտիկը
պետք է ֆիզիկապես զարգացած և տոկուն լինի,
տանի մարտական աշխատանքի ամեն տեսակ
գժվարությունները, միևնույն ժամանակ կայ-
տառ և վճռական մնալով հրդեհի դեմ մղվող պայ-
քարում:

Հոդ. 9. Հրդեհ հանգցնելու ամենադժվարին

պայմաններում մարտիկը չպետք է կորցնի արիու-
թյունը:

Սնվերապահութեն նվիրված լինելով կենինի-Ստ-
լինի մեծ զարծին, հայրենիքին և բալչելիկյան կու-
սակցությանը, մարտիկը չպետք է վաչ իր ուժերը,
վաչ ել կյանքը խնայի առաջադրված խնդիրը կա-
տարելու համար, առանձնապես վտանգի մեջ գր-
նըվաղ մարդկանց ոգնություն գույց տալու անհրա-
ժեշտության դեպքում:

Հոդ. 10. Մարտիկը միշտ պետք է իմանա իր
խնդիրը, ինչպես նաև իր ջոկի և կարառութիւնը-
դիրը, ու ձգտի դրանք կատարել բոլոր մատչե-
լի յեղանակներով և յեղած միջոցներով:

Հոդ. 11. Մարտական իրադրության մեջ մար-
տիկը կարող է մնալ առանց հրամանատարի ան-
միջական ղեկավարության: Այդպիսի ղեկավարում
մարտիկը պետք է գործի ինքնուրույն կերպով,
նախաձեռնություն և հնարամտություն ցուցա-
բերելով ամեն տեսակ պայմաններում:

Նախաձեռնության ցուցաբերումն առանձնա-
պես անհրաժեշտ է: —

- 1) մոտակա պետի հետ կապը կորցնելիս,
- 2) սպառնացող վտանգը կանխելու համար,
- 3) փոփոխված հանգամանքներում նպաստավոր
իրադրությունն արագ կերպով ոգտագործելու
համար, յերբ ժամանակ ու հնարավորություն

չկա ստեղծված կացության մասին զեկուցելու
պետին ու նոր կարգադրություն ստանալու,

4) վտանգի յենթարկված մարդկանց փրկելու և
ոգնություն ցույց տալու համար:

Հօդ. 12. Յուրաքանչյուր մարտիկ հրդեհը
հանգնելու ժամանակ պետք է ձգտի փոխա-
դարձ պաշտպանության և ոգնության իր մոտ
յեղած բոլոր միջոցներով և անձնական ոգ-
նությամբ ոժանդակելով ընկերների աշխատան-
քին:

Հօդ. 13. Մարտիկը պարտավոր է.—

1) գիտենալ իր ջոկի մարտական հաշվի բոլոր
համարների պարտականությունը և կարողանալ
դրանք կատարել մարտական իրադրության մեջ,

2) հետեւ իրեն ամրացված սարքավորման,
ինվենտարի ու հանդերձանքի կանոնավորու-
թյանը, մարտունակությանը և ինայել դրանք
մարտական իրադրության մեջ ոգտագործելու
ժամանակ,

3) ուշադիր լինել հրամանատարների և պետե-
րի կարգադրություններին, սիդնաներին և նշան-
ներին ու անվերապահորեն, արագ և ճիշտ կատա-
րել դրանք,

4) բոլոր գեպերում հարմարվել տեղական
պայմաններին և կապ պահպանել իր ջոկի հրա-
մանատարի ու մարտիկների հետ,

5) մարտական իրադրության մեջ առանց հրա-
մանատարի թույլտվության չհեռանալ իր տեղից,
այլ դիրքի անցնելով միայն բացառիկ գեպքե-
րում, յերբ ուղղակի վտանգ և սպանում կամ
ովերատիվորեն անհրաժեշտ ե այդ,

6) կարողանալ իրեն կամ տուժածին առաջին
ոգնություն ցույց տալ վիրավորվելու, այրվածք
ստանալու կամ թունավորվելու դեպքում,

7) հրդեհը լիկվիդացիայի յենթարկելու ժամա-
նակ ամեն կերպ պահպանել սոցիալիստական
սեփականությունը, քաղաքացիների կյանքը և
անձնական գույքը:

Հօդ. 14. Կապավորի աշխատանք կատարելու
ժամանակ մարտիկը պարտավոր է ժամանակին
տեղ հասցնել կարգադրությունները, անհապաղ
վիրադառնալ իրեն ուղարկող պետի (հրամանա-
տարի) մոտ և զեկուցել հանձնարարությունը
կատարելու մասին:

2. ԶՈԿԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ-
ՆԵՐԸ

Հօդ. 15. Զոկի հրամանատարը հանդիսանում է
իր ջոկի անձնակազմի անմիջական պետը և պար-
տավոր և ղեկավարել ջոկի բոլոր մարտական
գործողությունները:

Հօդ. 16. Հրդեհ հանգնելու ժամանակ ջոկի

հրամանատարը պետք և անմիջականորեն ազդի իր ջոկի յուրաքանչյուր մարտիկի վրա, տեսնի նրանցից յուրաքանչյուրին, ամեն կերպ խրախուսի նախաձեռնությունը, հերոսությունը և անձնվիրությունը, միաժամանակ հոգալով մարտիկների առողջությունը և կյանքը պահպանելու մասին:

Հոդ. 17. Մարտական գործողությունները հաջողությամբ վարելու համար ջոկի հրամանատարը պարտավոր ե.

1) գիտենալ իր ջոկի և կարառությունները և գրանք հաղորդել մարտիկներին,

2) հետեւ, վոր մարտիկները անսխալ ու ճիշտ կատարեն կարգադրությունները և սիգնալները,

3) նախազգուշության անհրաժեշտ միջոցները ձեռք առնել մարտիկների աշխատելու ժամանակ,

4) կազ պահպանել կարառությունը պետի (վերադաս պետի) հետ և ժամանակին նրան զեկուցել իր աշխատամասում տեղի ունեցած բոլոր փոփոխությունների մասին,

5) ջոկի անխափան աշխատանքի համար հոգտանել հրշիջման միջոցները ժամանակին համալրելու մասին,

6) հետեւ իր ջոկի սպառագինության կանոնավոր վիճակին և անխափան աշխատանքին,

7) անձնական որինակով նպաստել ջոկի (մար-

տիկի) առաջ դրված մարտական խնդրի հաջող կատարմանը:

3. ԿԱՐԱՌՈՒԼԻ ՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդ. 18. Կարառությունը պետը, մինչև խմբի պետի կամ նրա ոգնականի հրդեհի վայրը ժամանելը, պետք և անմիջականորեն զեկավարի իր կարառությունը մարտական գործողությունները:

Հոդ. 19. Կարառությունը պետը պարտավոր ե.

1) գիտենալ հրդեհի իրադրությունը և կարառությունը մարտական խնդիրը,

2) ժամանակին վորոշումներ կայացնել և հետեւ, վոր ճշտիվ կատարվեն դրանք,

3) մարտական առաջադրանքներ տալ ջոկերին, համագործակցություն կազմակերպել նրանց միջև, հետեւ, վոր հրդեհ հանդինելու ժամանակ առավելագույն եֆեկտ տա նրանց աշխատանքը,

4) անձամբ հետեւ ջոկերի աշխատանքի արդյունքներին, ժամանակին ստուգելով իր կարգադրությունների կատարումը,

5) անընդհատ ղեկավարել անձնակազմի աշխատանքը, կազ հաստատելով իր ջոկերի և հարկան ստորաբաժանումների միջև,

6) ժամանակին ջոկերին ապահովել հրդեհաշիջման բոլոր անհրաժեշտ նյութական միջոցներով,

7) ժամանակին վերադաս պետին հաղորդել իր տեղամասի իրադրության փոփոխման և հրդեհը հանդցնելու ընթացքի մասին,

8) ամեն կերպ զարգացնել և խրախուսել իր ստորաբաժանման անձնակազմի նախաձեռնությունը, հերոսությունը և անձնվիրությունը, միաժամանակ հոգալով մարտիկների առողջության պահպանման և կյանքի մասին:

Գ Լ Ո Ւ Խ III

ՍՊԱՌԱԶԻՆՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՀՐՇԻՉՄԱՆ ՄԻՋՈՑ-ՆԵՐԻ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդ. 20. Հրդեհաշեջ պահպանության սպառագինությունը, նայած նրանց դերին, լինում են հիմնական, հատուկ և ոժանդակ:

Հիմնական սպառագինությանը պատկանում են.—ավտոնասուները, նասոսավոր ավտոցիստերները, նասոսավոր ավտոմեխսանդուխքները (շարժական), ավտոզեղինները, նասոսասայլակային ձիաքարշերը, նասոսատակառային ձիաքարշերը, հրդեհաշեջ գնացքները, հրդեհաշեջ շոգենավերը և կատերները, վորոնք համապատասխան հակա-հրդեհային ինվենտար ու սարք ունեն:

Հատուկ սպառագինությանը պատկանում են.—նասոսավոր և աննասոս ավտոմեխսանդուխքնե-

ը (անշարժ), կապի, քիմիական, ծխապաշտպան, լուսավորման, ջրապաշտպան, կոմպրեսորային և սանիտարական սպասարկությունների ավտոմեքենաները:

Ոժանդակ սպառագինությանը պատկանում են.—տրանսպորտային ավտոմեքենաները, ավտոցիստերները (տակառաքարշերը), շլանգային ավտոմեքենաները (ձիաքարշերը), բենզինայուղատարները, ավտոբուսները:

Հոդ. 21. Հրդեհ հանգինելու համար հիմնական և հատուկ սպառագինության գործադրումը պետք է հիմնվի վառվող ոբյեկտի առանձնահատկությունների, հրդեհի չափի, վառվող նյութի բնույթի և շիջման համար կիրառվող նյութերի հրամարիչ հատկությունների հաշվառման վրա:

Հոդ. 22. Հրդեհաշեջ խմբերի ոգտագործած սպառագինության բոլոր տեսակների մեջ ամենից ավելի հրամարիչ զորություն ունի հիմնական սպառագինությունը:

Հիմնական սպառագինությունը հրդեհի շիջումը ապահովում է կոմպակտ կամ փոշիացված ջրացայտերի և փրփուրի ոգնությամբ, վորոնց գործողությամբ դաղարում և պինդ և հեղուկ նյութերի մեծ մասի այրումը:

Հիմնական սպառագինության ոգնությամբ մեկ չոկը կարող է հրդեհ հանգինելու դեպքերի մեծ

մասում ինքնուրույն կերպով տակտիկական
խնդիր լուծել:

Հօդ. 23. Հատուկ սպառազինությունը, հիմնական սպառազինության համագործակցությամբ, աղաճովում և հիմնական սպառազինության գործադրումը հրդեհում: Հատուկ սպառազինությունը միաժամանակ ապահովում է, վոր հնարավոր դառնա այն վառփող նյութերի անմիջական մարումը, վորոնք ջրով կամ փրփուրով չեն մարվում, ինչպես նաև մարդկանց փրկությունը, կապի կազմակերպումը, հրդեհի վայրի լուսավորումը, արժեքափոր գույքը կաշտապահնությունը ջրից:

Հետ. 24. Ոժանդակ սպառազինությունը հրդե-
հաշիճման պրցեսն ապահովում և անհրաժեշտ
նյութական միջոցներով:

Հոդ. 25. Հրդեհ հանդցնելու համար ժամանակակից տեխնիկայի կողմից կիրառվող հիմնական հրամարիչ միջոցներն են. — ջուրը, փրփուրը, ածխաթթու և այլ իներտ գազերը, ածխաթթվից ձյունը, ածխածին—քառքլորիդը, հրամարիչ փոշիները, ծածկույթները:

Հիշյալ միջոցները գործադրվում են նայած ինչ-պես նրանց, այսպես ել վառվող նյութերի հատկություններին:

Հոդ. 26. Զուրը գործադրվում ե.—

1) Վորպես ամբողջական ջրացայտ.—կիզել»

պինդ նյութերի հրդեհը հանգցնելու համար, ինչ-
պես նաև վառվող տերմիտը, մաքուր տերմիտա-
յին և ելեքտրո-տերմիտային հրձիգ նյութերը
հանգցնելու համար (հրձիգ նյութերը հապցնելու
ժամանակ ջուրը արվում է 6—8 մթնոլորտ ճնշ-
մամբ),

2) վորպես անձրեային ցայտ—պինդ և թելա-
վոր նյութերը, մանր կոտրակված և փոշիանման
գրության մեջ գտնվող նյութերը (բամբակ, վուշ
ալրային կամ փայտանյութային փոշի և այլն),
հանգժնելու և հալված մետաղների (պողպատ,
չուկուն) մակերեսը սառեցնելու համար,

3) խիստ փողիացված մառախուղանման գրությամբ — պինդ, հեղուկ և գազանման կիզելի նյութերի հրդեհը հանգնելու համար, մաքուր- ֆուֆորային հրձիգ նյութերը հանգնելու հա- մար, պայմանով, վոր ֆուֆորի հանգած մասնիկ- ները հավաքվեն շենքերից ու կառուցումներից, ֆուֆորի այրվելուց գոյացած ծխածածկույթը լիկիդացիայի յենթարկելու և հալած մետաղնե- րի մակերեսը սառեցնելու համար.

4) զոդիանման զրությամբ հատուկ հարմարանքներ ունեցող տեղերում պինդ, հեղուկ և գաղանման նյութերի հրդեհը հանգցնելու համար:

Հոդ. 27. Քուր չի կարելի գործադրել.—

1) յերբ հրդեհ հանգցնելու ժամանակ նյութեր

կան, վորոնք ռետակցիա յեն տալիս ջրի հետ
(կալիում, նատրիում, չհանգած կիր, կարբիդ-
կացիում և այլն),

2) յերբ մազնիումի մետաղները և ելեքտրոնը
վառվում են կոտրակված գրությամբ (պուդրա,
փոշի, պորոշոկ, կրոշլա) և յերբ այդ մետաղնե-
րի խառնուրդներ կան ոքսիդացուցիչների հետ
(սելիտրա, բերտոլետյան աղ և այլն),

3) կոմքինացված հրձիգ (տերմիտո-նատրիու-
մական կամ կալիումական, ֆոսֆորա-նատրիու-
մական կամ կալիումական և այլն) լիցք ունեցող
հրձիգ նյութերը հանգցնելու ժամանակ, վորոնց
հանգցնելու համար գործադրվում են քիմիական
հատուկ միջոցներ,

4) բարձր լարվածության հոսանքի տակ գտըն-
վող ելեքտրոսարքերը և ապարատները հանգց-
նելու ժամանակ:

Հոդ. 28. Փրփուրը գործ և ածվում դյուրավլառ
հեղուկները, ինչպես նաև պինդ նյութերը հանգց-
նելու համար:

Նայած հրդեհի բնույթին, փրփուրը վառվող
մակերեսի վրա յերաց թողնվում ցայտի կամ
հոսանքի ձևով:

Հոդ. 29 Յերբ այնպիսի նյութեր են վառվում,
վորոնք չի կարելի հանգցնել ջրով կամ փրփու-
րով, ինչպես նաև, յերբ հրդեհի վայրում առանձ-
նապես արժեքավոր նյութեր կան (նկարներ,

գրքեր, փաստաթղթեր, թանգարանային իրեր,
ելեկտրոսարքեր և այլն), վորոնք կարող են
փշանալ ջրից կամ փրփուրից,—գործադրվում են
ածխաթթվի ձյուն, ածխաթթու և այլ իներտ
գազեր:

Հոդ. 30. Հրդեհը ածխածին-քառքլորիտով և
հրամարիչ փոշիներով հանգցվում և այն ժամա-
նակ, յերբ վառվում են ներքին այրման շարժիչ-
ներ, ելեքտրական սարքեր, թանկարժեք ապա-
րատներ և զանազան քիմիական նյութեր:

Հոդ. 31. Ծածկույթներ (բրդի, աղրեստի կամ
բրեղենտի) գործադրվում են այն դեպքերում,

1) յերբ փոքր տարածության վրա վառվում
են գյուրավառ հեղուկներ,

2) յերբ վառվում են զազատարներից և ապա-
րատներից գուրս յեկող գազեր,

3) յերբ վառվում և մարդու վրայի հագուստը,

4) յերբ հարկավոր և պաշտպանել վառվող
սրյեկտների կողքի որյեկտները (եկրանավո-
րում):

Գ Լ Ո Ւ Խ VI

ԿԱՐԱԿԵԼԻ ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

ՄԵԿՆՈՒՄԸ ՅԵՎ ՀՐԴԵՀԻ ՎԱՅՐԸ ԳՆԱԼԸ

Հոդ. 32. Հրդեհը լիկվիդացիայի յենթարկելու
հաջողությունը զգալի չափով կախված է հրդե-

հաշեց պահպանության՝ հրդեհի վայրը ժամանելու արագությունից:

Հրդեհի մասին լուր ստանալուց հետո ստորաբաժնումը վորքան ավելի շուտ ժամանի հրդեհի վայրը, այսօան ավելի հեշտ կլինի պայքարել հրդեհի դեմ: Դրա համար ել կարառվի անձնակազմի խնդիրն ե՝ ամենակարճ ժամկետում ապահովել տափապաղով հավաքելը և հրդեհի վայրը ուղեղորվելը:

Հոդ. 33. Հրդեհաշեց ավտոմեքենաների (ձիաքարշերի) մեկնումը և շարժումը դեպի հրդեհի վայրը կատարվում ե հերթապահ կարառվի պետի (ավագ պետի) հրամանով, վորը նկատի առնելով վայրի իրադրությունը և բնույթը, ջոկերի հրամանատարներին ցուցում ե տալիս շարժման արագության և ուղղության մասին:

Հոդ. 34. Առաջին ավտոմեքենայի (ձիաքարշի) շարժումը վարում ե կարառվի պետը (ավագ պետը), իսկ մնացած ավտոմեքենաներինը՝ ջոկերի պետերը:

Հոդ. 35. Հրդեհաշեց դեպոյից վորեե ավտոմեքենայի (ձիաքարշի) մեկնման ձգձգումը, յերբ մարտական անձնակազմը պատրաստ ե ուղեղորվելու այլ ավտոմեքենաների (ձիաքարշերի) մեկնումը, այդ ավտոմեքենաների (ձիաքարշերի) մեկնույնիսկ, յեթե կանգ պետը

քենան (ձիաքարշը): Կարառվի պետը (ավագ պետը) գլխավոր ավտոմեքենայի ձգձգման ժամանակ մեկնում ե հետեւյալ ավտոմեքենայով (ձիաքարշով):

Հրամկազմի ժամանակին չներկայանալու դեպքում ավտոմեքենաների (ձիաքարշերի) մեկնումը ձգձգելու—արգելվում է:

Հոդ. 36. Յեթե ճանապարհին տեղեկություն ե ստացվում հրդեհի լիկվիդացիայի մասին, կարառվը (ջոկը) պարտավոր ե ժամանել հրդեհի վայրը և տեղում համոզվել այդ բանում:

Հոդ. 37. Յեթե գլխավոր ավտոմեքենան (ձիաքարշը) ավարիայի հանդիպի, կարառվի պետը կանգնեցնում ե հետեւյալ ավտոմեքենան (ձիաքարշը) և առանց հապաղելու դնում ե հրդեհի վայրը, նախորոք կարգադրություն անելով ջոկի հրամանատարին հետագա գործողությունների մասին:

Յեթե ավարիայի հանդիպի կամ հարկադրաբար կանգ առնի վոչ գլխավոր ավտոմեքենան (ձիաքարշը), մնացած ավտոմեքենաները (ձիաքարշերը) շարունակում են շարժումը, կանգ չառնելով և չդանդաղեցնելով շարժման արագությունը:

Հոդ. 38. Յեթե ավտոմեքենայի (ձիաքարշի) անկանոնության պատճառով վորը չի կարելի

արագությամբ վերացնել հարկադրական կանք տեղի ունենա, ջոկի հրամանատարը կանգնեցնում է անցնող առաջին ազատ ավտոմեքենան կամ ձիաքարշը՝ անձնակազմը և սպառազինությունը հրդեհի վայրը փոխադրելու համար կամ թե ռեղերվային տրանսպորտային միջոցներ և կանչում խմբից, Ծայրահեղ դեպքում ջոկի հրամանատարը մարտական անձնակազմի և սպառազինության անհրաժեշտ գործիքներով ճանապարհը շարունակում է հետիոտն։ Շոփերը (կառապանը) մնում է խափանված ավտոմեքենայի (ձիաքարշի) մոտ։

Հոդ. Յ. Յեթե ավտոմեքենան (ձիաքարշը) կատաստրոֆի հանդիպի, վորի ժամանակ մարդկային քսասվածք կամ գոհեր լինեն, կարառվեպեաը (ավագ պետը) կատաստրոֆի տեղում թողնում է ջոկի հրամանատարներից մեկին և անհրաժեշտ քանակությամբ մարտիկներ՝ պատահածի մասին տեղեկություններ տալու և տուժածներին անհետաձգելի ոգնություն ցույց տալու համար, իսկ ինքը, կարառվի մնացած կազմի հետ, գնում է հրդեհի վայրը։

Հոդ. Պ. Յեթե կարառվը հրդեհի վայրը գնալիս նկատի մի ուրիշ հրդեհ, ապա կարառվի պետը, նայած վասպող ոբյեկտների կարեռությանը, պարտավոր է համապատասխան ուժեր և մի-

ջոցներ առանձնացնել յերկրորդ հրդեհը հանգցնելու համար և առաջին խոկ հնարավորության դեպքում այդ հրդեհի մասին հաղորդել հրդեհաշեցի պահպանության կապի կենարունական կայանը։

Հոդ. Ա. Գնալու հանապարհին հրդեհաշեց ավտոմեքենաների (ձիաքարշերի) հարկադրական կանգառների բոլոր դեպքերում կարառվի պետը կամ ջոկի հրամանատարը պատահածի մասին անհապաղ հաղորդում է հրդեհաշեց պահպանության կապի կենարունական կայանը։

ՀՐԴԵՀԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ

Հոդ. Ա. Հենց վոր կարառվը (ջոկը) ժամանում է հրդեհի վայրը, անհապաղ հրդեհի հետախուզություն և կազմակերպում։ Հետախուզությունը կատարվում է վոչ միայն վառվող շենքում (ոբյեկտում), այլև մերձակա շենքերում (ոբյեկտներում), նայած կրակի հնարավոր տարածմանը։

Հոդ. Ա. Հետախուզությունը կատարում է անձամբ կարառվի պետը կամ հրդեհաշեց ստորաբաժանման հրամանատարը, վոր առաջին և ժամանել հրդեհի վայրը, առաջին ջոկի հրամանատարի և կապավորների հետ միասին։

Հոդ. Ա. Հետախուզության ժամանակ լավ կող-

մնորոշվելու համար անհրաժեշտ և ոգտվել վառվող որյեկտի կոնստրուկտիվ առանձնահատկությունների, տեխնոլոգիական պրոցեսի և սարքավորման հետ լավ ծանոթ անձանց տեղեկություններից:

Հոդ. Ա. Հրդեհի հետախուզությունը պարզում է,—

1) արդյոք մարդկանց վտանգ չի սպառնում, նրանց գտնվելու վայրը, ազատելու ճանապարհները և յեղանակները,

2) հրդեհի ոջախը, չափը և բնույթը,

3) հրդեհի տարածման պայմանները,

4) պայթյունների, թունավորումների, փլուզումների վտանգը, ելեքտրոսարքերի և բարձր լարվածության ցանցերի առկայությունը և այլն,

5) վառվող որյեկտի սահմաններում շլանգագծեր անցկացնելու ուղիները, փողավարի (СТВОЛЬЩИК) յելման կետերը և հրդեհաշեջ սանդուղքներ գնելու տեղերը,

6) գույքի և վագուացիայի ճանապարհները:

Հոդ. Ա. Հետախուզության խնդիրները հաջողությամբ կատարելու համար հետախուզությունը կատարող անձինք պարտավոր են.—

1) ամեն տեսակ նպաստավոր և ամենակարճ ճանապարհներով ներթափանցել հրդեհի վայրը,

2) միջոցներ ձեռք առնել բոլոր մատչելի յե-

ղանակներով և յեղած միջոցներով կանխելու կրակի արագ տարածումը (փակել պատուհանները և դռները, փակել վիճակիլացիան և այլն):

Հոդ. Ա. Հետախուզություն կատարելու ժամանակ, նախազգուշության նպատակով, անհրաժեշտ ե,—

1) իր հետ ունենալ փրկման պարաններ, հակածխային սարքեր, անհրաժեշտ շանցեյան գործիք և լուսավորման սարքեր,

2) թունավոր նյութերի առկայության ամենափոքր կասկածի դեպքում հակագաղ հագնել,

3) խիստ ծխակալած և իրերով կուտակված շենքերում հետախուզություն կատարելու ժամանակ պարան կապել իրեն, նրա յերկրորդ ծայրը թողնելով շենքի մուտքի մոտ գտնվող մարտիկի ձեռքին,

4) հիշել անցած ճանապարհը,

5) զգուշությամբ բաց անել վառվող շենքի դռները և այն ոգտագործել վորպես պաշտպանության միջոց, տարածված գազերից և բոցերից հանկարծակի այրվածք ստանալուց,

6) վառվող ջահով կամ բաց կրակ ունեցող այլ գործիքներով չմտնել շենքը, յերբ շենքերում պայթուցիկ կամ հեշտ բոցավառվող նյութեր ու վառվող գազեր կան,

7) բարձր լարվածության ելեքտրական սար-

քեր ունեցող շենքերը և պայմաննի կամ թունավորման տեսակետից վտանգավոր շենքերը մտնել միայն ձեռք առնելով նախազգուշության բոլոր միջոցները, վոր սահմանված են այդ շենքերի վերաբերյալ հրահանգներով և պահպանելով այդ շենքերը սպասարկող տեխնիկական անձնակազմի ցուցումները:

Հօդ. Ա8. Պարզելով հրդեհի իրադրությունը, կարառութիւն պետը (ավագ պետը) պետք է կապավորի միջոցով հրդեհաշեջ պահպանության կապի գլխավոր կայանը հաղորդի հետեւյալ տեղեկությունները,—

1) Ի՞նչ ե վառվում,
2) հրդեհի չափը,
3) Ի՞նչ լրացուցիչ ուժեր ու միջոցներ են անհրաժեշտ, յեթե յեղած ուժերով դժվար ե լիկվագիտացիայի յենթարկել հրդեհը:

3. ՄԱՐՏԱԿԱՆ ԲԱՑԱԶԱՏՈՒՄԸ

Հօդ. Ձերք կարառութիւն հրդեհի վայրն ե ժամանում, հետախուզության հետ միաժամանակ մարտական բացազատման պատրաստություն ե տեսնվում. — ավտոմեքենաների դասավորումը տեղում, ավտոնասոսների (ձեռքի նասոսների) ամրացումը ջրի աղբյուրների վրա, ստենդերը հիդրանտի վրա ամրացնելը, ծծող շանգների միա-

ցումը և այն նախապատրաստական միջոցառումների կատարումը, վոր թելադրվում են տեղական պայմաններով:

Այսպիսի նախապատրաստությունը ապահովում է ուժերի և միջոցների արագ և կազմակերպված կենտրոնացումը յելման դիրքերում, հենց վոր հետախուզությունից հետո պարզվի հրդեհի իրադրությունը:

Հօդ. Այն գեղքում, յերբ հրդեհի իրադրությունը հիմնականում պարզ ե նախքան հետախուզություն սկսելը, կարառութիւն պետը (ավագ պետը) կարգադրություն և անում նախնական բացազատման մասին:

Նախնական բացազատման մեջ մտնում են.—

1) մագիստրալային շլանգագծեր անցկացնելու դրված ուղղությամբ,

2) ճյուղագծերի ճյուղավորումների, շլանգների, սանդուղքների, շանցեյան գործիքների մոտ բերումը հրդեհի որյեկտին:

Հօդ. Ա1. Լիակատար մարտական բացազատումը, այսինքն ուժերն ու միջոցները յելման դիրքերում դասավորելը և զրանք մարտական պատրաստության վիճակում բերելը, կատարվում ե հետախուզությունը վերջանալուց և կարառվութեատի (ավագ պետի) կողմից հրդեհը լիկվիդացի-

այի յենթարկելու կարգի մասին վորոշում կա-
յացնելուց հետո:

Այն գեպքերում, յերբ հրդեհի իրազրությունն
այնքան պարզ է, վոր հրդեհի նախնական հետա-
խուզություն չի պահանջվում, լիակատար մար-
տական բացազատում թույլատրվում ե հրդեհի
վայրը ժամանելուն պես:

Հոդ. 52. Կանչի բարձր համարով հրդեհի վայ-
րը ժամանած ստորաբաժանումները հրդեհաշիշ-
ման ղեկավարից խնդիր ստանալով, վորպես կա-
նոն, մարտական լիակատար բացազատում են
կատարում:

Հոդ. 53. Մարտական բացազատումը կատար-
վում է ջոկի հրամանատարների անմիջական ղե-
կավարությամբ, ըստ հնարավորին նվազագույն
ժամկետում:

Հոդ. 54. Ավտոմեքենաները (ձիաքարշերը) և
հրդեհաշիշման մյուս գործիքները մարտական
բացազատման ժամանակ դրվում են այնպիսի
հաշվով, վորպեսզի նրանք,

- 1) չխանգարեն մանեզրունակությանը,
- 2) մարտիկների համար ապահովեն արագ կեր-
պով յելման կետերում կենարոնանալու հնարա-
վորությունը,
- 3) չդժվարացնեն փողոցային շարժումը հրդե-
հի վայրում:

Յօդ. 55. Կարգադրություն անելով շլանգագծեր
անցկացնելու մասին, ջոկի հրամանատարը պար-
տավոր և մարտիկներին ցույց տալ շլանգագծերի
անցկացման ուղղությունը, ձևն ու յեղանակը,
ճյուղավորումներ հարմարացնելու տեղը:

Հօդ. 56. Շլանգագծերի ուղղությունը, ձևը և
ճյուղավորումներ դնելու տեղը ընտրելիս ջոկի
հրամանատարը պետք է

1) ընտրի ղեպի հրդեհի ոջախը տանող առա-
վել հարմար և ամենակարճ ճանապարհները,

2) խուսափի սուր և վառվող առարկաների
վրայով, ինչպես նաև այն վայրերում, վորտեղ
թթուներ կամ այլ ուտիչ հեղուկ և թափված,
շանգագծեր անցկացնելուց,

3) շլանգագծերով չծանրաբեռնել շենքի հիմ-
նական անցքերը և սանդուղքները, սանդղա-
վանդակում շլանգագծեր անցկացնել առավելա-
պես մարշերի միջով,

4) շենքի դրսից ղեպի կտուրը կամ չերդակը
շանգագծեր անցկացնելու ժամանակ դրանք
փռել միջնապատերի դիմաց,

5) շենքի ներսում, վորպես կանոն, գործածել
կիսառեզինացած շլանգներ,

6) ճյուղավորումը դնել այնպիսի հաշվով, վոր
նվազագույն քանակությամբ շլանգներ գործած-
վեն ճյուղավորված գծերում, ճյուղավորում թույլ

շտալ այնպիսի վայրերում, վորտեղ նա կարող ե դժվարացնել շենքի մուտքը կամ փչացման յենթարկվել:

Հոդ. 57. Մեծ շարժում ունեցող փողոցներում, յերբ նախորդը հատուկ հարմարանքներ չեն պատրաստված շանգագիր անցկացնելու համար, շարժումը կանգնեցնելուց խուսափելու նպատակով շանգագիրը, ըստ հնարավորության, անց են կացվում այն ջրի աղբյուրներից, վորոնք գանվում են փողոցի այն կողմում, վորտեղ տեղի յե ունենում հրդեհը:

Հոդ. 58. Յերբ անհրաժեշտ ե շանգագիրն անցկացնել փողոցի մեջտեղով, շլանգագիծը, անցման տեղում, պաշտպանվում ե հատուկ կամքրջակներով, իսկ կամքրջակներ չլինելու դեպքում, շանգագիրը յերկու կողմերում տախտակ, փուշտա (գորինալ) և այլն դնելու միջոցով:

Հոդ. 59. Յերբ շանգագիծը կտրում-անցնում ե ոելսային ուղիներ, շլանգագիծն անց ե կացվում ոելսերի տակով, շլաների միջև Յեթե այդ բանը հնարավոր չե անել մարտական բացազատման ժամանակ, ապա շլանգագիծն անց ե կացվում ոելսային ուղիների վրայով, վորից հետո յերկրորդ գիծ ե անցկացվում ոելսերի տակով կամ թե ուղիների վերևով՝ այնպիսի բարձրու-

թյամբ, վորպեսզի ապահովվի տրանսպորտի անարգել շարժումը:

Հոդ. 60. Պարանների ոգնությամբ կամ հրդեհաշիջային սանդուղքներով վերև բարձրացված շանգագիծը պետք ե շլանգագծային բռնիչով հուսալի կերպով ամրացվի շենքին:

Ուղղահայաց կերպով ավելի քան 20 մետր բարձրացված շլանգագիծը պետք ե վերեից հուսալի կերպով ամրացվի յերկու բռնիչով:

Հոդ. 61. Շլանգագծեր անցկացնելուց հետո պետք ե հսկողություն կազմակերպվի նրանց վրա: Ճյուղավորումը և շլանգագծերը սպասարկող մարտիկները պարտավոր են,—

1) թույլ չտալ վոր տրանսպորտ անց կինա շլանգագծերի վրայով, բացառությամբ այն տեղերից, վորտեղ շլանգները պաշտպանված են հատուկ հարմարանքներով,

2) շլանգագծերի ժամանակավոր կարկատան կատարել (սեղմիչներ հաղցնել) և նշել ֆլասվածվայրերը,

3) փոխարինել շարքից դուրս յեկած շլանգագծերը,

4) անընդհատ կապ պահպանել նասոսի կամ ստենդերի մոտ աշխատողի հետ և հրդեհի վայրում աշխատողների հետ,

5) ջոկի և հրամանատարից կարգադրություն

ստանալուն պես, իսկ բացառիկ դեպքերում՝ փողավար մարտիկներից նախազգուշացում ստանալուն պես համապատասխան շանդադերի մեջ ջուր կամ փրփուր բաց թողնել կամ դադարեցնել:

Հոդ. ՅԵ. Ցեթե շենքի ներսում յեղած հրդեհի ոչախը տանող սովորական ամենակարճ ճանապարհները փակված են վորեն բանով (դռները փակ են և այլն), կամ՝ յեթե ներթափանցմանը խանդարում են ծուխը, գազերը և այլն, ապա միջոցներ են ձեռք առնվում դռները բաց անելու և կոնստրուկցիաները քանդելու միջոցով վերացնել արգելքները, կամ թե շենքի մեջ ներթափանցումը կատարվում ե դրսից, պատուհանով կամ կտորով, այդ դեպքում գործադրելով հրդեհաշիջման սանդուղքներ:

Հոդ. ՅՅ. Ցերը շենքերում ստացիոնար հրդեհաշիջման սանդուղքներ կան, աշխատելու համար դրանք ոգտագործվում են առաջին հերթին:

Հոդ. ՅԱ. Հրդեհաշիջման սանդուղքներ դնելու ժամանակ ջոկի հրամանատարը հաշվի յե առնում, — սանդուղք գործադրելու նպատակը, վերելքի բարձրությունը և մարացման վայրի մատույցների դրությունը:

Նայած այդ հանդամանքներին, կարող են գործածվել սանդուղքների տարբեր կոմբինացիա-

ներ (դուրս քաշվող և գրոհային սանդուղքներ և այլն):

Հոդ. ՅԵ. Զերդակային հրդեհների ժամանակ անլուանգության համար հրդեհաշիջման սանդուղքներն ամրացվում են առավելապես պատուհանների միջև ընկած պատերին, խորություններ չունեցող պատերին, բրանդաուերին:

Հարկաբաժիններում հրդեհ լինելու դեպքում հրդեհաշիջման սանդուղքները դրվում են այն պատուհանների դիմաց, վորտեղից բոց դուրս չեղալիս:

Այն պատուհանների դիմաց, վորտեղից բոց ե դուրս գալիս, թույլատրվում ե հրդեհաշիջման սանդուղքներ դնել սիրայն մարդկանց փրկելու համար. այդ ժամանակ սանդուղքը պետք ե պաշտպանվի ջրի ցայտերով:

Հոդ. ՅՅ. Հրդեհաշիջման սանդուղքներն ամրացվում են ըստ հնարավորին ավելի մոտ մարտիկների յելման դիրքերին, այն հաշվով, վորկրակը չսպառնա սանդուղքներին, նրանցով բարձրանալը լինի հարմար և անվտանգ:

Հոդ. ՅԵ. Սանդուղքը նոր դիրք տեղափոխելը թույլատրվում ե միայն այն բանից հետո, յերբ սանդուղքով բարձրացած անձնակազմն ուրիշ ճանապարհներով ապահովվի այլ դիրք անց-

նելը և իրազեկ դարձվի սանդուղքի տեղափոխման մասին:

Հոդ. Յ8. Դուրս քաշվող սանդուղքները պետք ե ամուր կերպով հաստատվեն ամուր հիմքի վրա և ամրացվեն, իսկ գրոհային սանդուղքները պետք ե վստահելի կերպով կախվեն: Դուրս քաշվող սանդուղքների թեքությունը պետք ե լինի $70-80^{\circ}$ սահմաններում:

Հոդ. Յ9. Զոկի հրամանատարը պարտավոր ե հետեւ սանդուղքների ամրացման ճշությանը և դրանցով բարձրանալու համար մարդիկ ուղարկել միայն այն գեղգում, յերբ համոզված ե վոր սանդուղքները դրվել ու ամրացվել են հուսալի կերպով:

Հոդ. Յ10. Մարտական բացազատման ժամանակ շարժումը և աշխատանքը շենքերում կատարվում ե այսպիսի նախազգուշությամբ, վորը կիրառվում է հետախուզության ժամանակ:

Հոդ. Յ11. Հրդեհաշիջման ուժերն ու միջոցները գործողության մեջ են դրվում նայած նրանց պատրաստության:

4. ՀՐԴԵՀ ՀԱՆԳՑԵԼԸ

Հոդ. Յ12. Հրդեհ հանգնելը կարառվի մարտական գործողության հիմնական և վճռական ետապն ե. գործողության նպատակն ի առավելագույն առավելացում:

Պույն արագությամբ և վճռականությամբ մեկուսացնել ու լիկվիդացիայի յենթարկել հրդեհը:

Հոդ. Յ13. Հրդեհ հանգնելն սկսվում և այն բանից անմիջապես հետո, յերբ մարտիկները գրավել են յելման դիրքերը և գործողության մեջ են դրել հակածրդեհային սարքերն ու ու հրշիջման միջոցները:

Հոդ. Յ14. Հրշիջման միջոցները գործողության մեջ դնելն սկսվում և միայն կարառվի պետի կամ ջոկի հրամանատարի կարգադրությամբ:

Հոդ. Յ15. Հրդեհ հանգնելու համար մարտական ուժերի ու միջոցների քանակն ու հզորությունը վորոշվում ե կարառվի պետի (ավագ պետի) կողմից, նայած հրդեհի չափին ու բնույթին:

Հոդ. Յ16. Հրդեհ հանգնելու ժամանակ կարառվի պետի (ավագ պետի) հիմնական խնդիրն ե՝ ճիշտ և նպատակահարմար ձեռվ ուղարկործել յեղած ուժերը, գլխավոր հարգածը հասցնել տարածման հիմնական ուղիներին և շրջապատել հրդեհը՝ առավել ուժեղ ոջախները լիկվիդացիայի յենթարկելու համար:

Դրանից յենելով առկա ուժերը պետք ե ոգտագործել պահպանելով հետևյալ սկզբունքները:

ա) յեթե հրդեհը ընդգրկել ե առանձին կանգնած շենք կամ կառուցում և կրակը հարկան որ-

յեկտների վրա տարածվելու սպառնալիք չկա, ապա հիմնական ուժերն ուղարկվում են գլխավոր հարվածը առավելնորդաւալոր ուղղությամբ հասցնելու համար,

բ) յեթե հրդեհն ընդգրկել ե շենքի կամ կամ ոռուցվածքի մի մասը և տարածվում ե նրա մյուս մասերը կամ հարեւան շենքերը, ապա հիմնական ուժերն ուղարկվում են գլխավոր հարվածը հրդեհի տարածման հիմնական ուղիներին հասցնելու համար և, բացի դրանից, ուժերի ու միջոցների անհրաժեշտ մասն ուղարկվում ե հրդեհը շրջապատելու համար,

գ) յեթե հրդեհն ընդգրկել ե առանձնապես արժեք չներկայացնող շենք և անմիջականորեն սպառնում ե մոտակա արժեքավոր շենքին, ապա հիմնական ուժերն ուղարկվում են արժեքավոր շենքը պաշտպանելու համար, իսկ ուժերի մի մասն առանձնացվում ե անմիջականորեն հրդեհն հանդցնելու համար, ըստ վորում, հիմնական ուժերն առաջին իսկ հնարավորության դեպքում նույնպես ոգտագործվում են հրդեհը հանդցնելու համար:

Հօդ. 77. Հրդեհների բացարձակ մեծամասնությունը հանդցվում է ջրի ողնությամբ, վորը հրշիջման ամենահզոր միջոցներից մեկն ե: Զուր գործածելով հրամանատարները և մարտիկները

պետք ե միշտ նկատի ունենան, վոր ջուրը վոչ միայն հրամարիչ հատկություններ ունի, այլև կարող ե վասս պատճառել շենքի չփառվող մասերին, գույքին և այլն: Դրա համար ել հրդեհ հանդցնելու համար ջուրը պետք ե գործադրվի այնպիսի քանակությամբ, վորն իրոք անհրաժեշտ չ կրակը հանդցնելու համար: Հրդեհ հանդցնելու համար վորքան ավելի քիչ ջուր ծախսվի, այնքան ավելի քիչ վասս կհասցվի սոցիալիստական սեփականությանը և քաղաքացիների անձնական գույքին:

Հօդ. 78. Հրդեհն հանդցնելու ժամանակ շենքերը, կառուցումները և գույքը ջրից պաշտպանվում են հետեւյալ կերպ.—

1) շենքերի մեջ ծորակավոր փողաններ, ջրափոխացուցիչներ, փոքր արամագիծ ունեցող ջըրցաններ գործադրելու միջոցով,

2) հիդրոպուլտեր գործադրելով,

3) ցայտի գործողությունը դադարեցնելով,

4) պատերի բացվածքներից ցայտը շենքից դուրս հանելով,

5) ջուրը հավաքելով՝ յերբ նա կաթում ե ներքեմի հարկը,

6) հատուկ սարքերի ու հարմարանքների միջոցով ջուրը շենքից հեռացնելով,

7) արժեքավոր իրերը անջրանցիկ ծածկոցներով ծածկելով:

Հօդ. 79. Գրոհի հաջողությունն զգալի չափով կախված ե փողավարների աշխատանքի համար ճիշտ ընտրված դիրքերից: Դրա համար ել փողավարների դիրքեր ընտրելու ժամանակ հիմնականում անհրաժեշտ ե ապահովել հրդեհի ոջախի լավ տեսանելիությունը և ցայտի ազատ մաներա անելու հսարավորությունը՝ կրակը նրա տարածման ուղիներում կասեցնելու և այրման բոլոր ոջախները լիկվիդացիայի յենթարկելու նպատակով, ինչպիսի հարթության վրա ել նրանք գտնվեն (ուղղահայաց, հորիզոնական, թեք):

Հօդ. 80. Մի շարք դեպքերում ցայտի մաներումը պահանջում ե տեղափոխել կամ յերկարացնել շլանդագծերը:

Այդ դեպքում, յերբ փողանի տեղափոխումը կապված ե շլանդագիծը կարճ տարածության վրա տեղափոխելու հետ և շլանդագծերի յերկարացում չի պահանջում, ապա այդ բանը կատարվում ե առանց ջրի հոսանքն ընդհատելու: Իսկ յեթե տեղափոխումը կապված ե շլանդագծերը մեծ տարածության վրա տեղափոխելու կամ փողանը վեր բարձրացնելու հետ, ապա այդ բանը կատարվում կապված է յերկարացնելով:

Շլանդագծի յերկարացումը կատարվում է առավելապես փողանի մոտ, այն բանից հետո, յերբ դադարեցվի ջրի հոսանքը իսկ յերբ յերկարացվի մագիստրալ գիծը, ջրի հոսանքը դադարեցվում ե անմիջականորեն նասոսի և ստենդերի մոտ, իսկ ճյուղագծերը յերկարացնելու ժամանակ—ճյուղագծումների մոտ:

Հօդ. 81. Յերբ ոդի ջերմաստիճանը ցած ե և սպառնալիք կա, վոր ջուրը կարող ե սառչել շլանդագծերում, ջրի հոսանքը գծում չի ընդհատվում մինչև գծի աշխատանքի վերջանալը, ըստ վորում, անհրաժեշտ դեպքերում աշխատող գծին զուգահեռ, նրանից 1—2 մետր հեռավորության վրա անց ե կացվում պահեստի գիծ:

Հօդ. 82. Փողավար մարտիկը պարտավոր ե.—

1) վառվող տեղին մոտենալ, վորքան կարելի յե, ավելի մտ և, ըստ հսարավորին, կանգնել նրա հետ մեկ մակարդակի վրա կամ մի քիչ բարձր:

2) ցայտն ուղղել կրակի տարածման դեմ և, առաջին հերթին, այն կոնստրուկցիաների վրա, վորոնց վառվելը կամ ամրության փոփոխումը կարող ե բռն կոնստրուկցիայի կամ նրա վրա հիմնված կառուցումների խորտակում առաջ բերել,

3) ուղղահայաց մակարդակները հանգնելու

ժամանակ ցայտն ուղղել դեպի ցած,

4) կրակը հանգցնել ցայտն ուղղելով անմիշականորեն հրդեհի ոջախների վրա (առավել ուժեղ վառվելու տեղերը),

5) մոտակա կառուցումները կամ շենքի առանձին մասերը կրակից պաշտպանելու ժամանակ ցայտն ուղղել այն կոնստրուկցիաների վրա, վորոնց սպառնում ե կրակը,

6) կոնստրուկցիաները բացելու կամ քանդելու մարդկանց ազատելու, գույքի և վակուացիայի աշխատանքների ժամանակ ցայտի գործողությամբ ապահովել այդ աշխատանքների հաջող կատարումը,

7) դյուրավառ հեղուկներով լի ռեզերվուարները, սեղմ գագերով լի բալոնները և այլն պաշտպանելու ժամանակ ցայտն ուղղել կրակի գործողության հետ շփվող վայրերի վրա՝ սառեցնելու համար,

8) թեք կտուրներին, մեծ բարձրությունների և դրովի սանդուղքների վրա աշխատելու ժամանակ հուսալի կերպով ամրանալ և ամրացնել շլանգագիծը,

9) բարձր լարվածության հոսանքի (ավելի քան 250 վոլտ) ելեկտրոլարերի և ելեկտրոսարքերի առկայության ժամանակ չդիպչել նրանց և

թույլ չտալ, վոր կոմպակտ ցայտ դիպչել այդ սարքերին:

Հոդ. 83. Այն դեպքում, յերբ ծուխը կամ գաղերն արգելում են մոտենալու հրդեհի ոջախներին, ապա միջոցներ են ձեռք առնվում դրանք հեռացնելու համար, իսկ յերբ հնարավոր չե դրանց արագությամբ՝ հեռացնել, անձնակազմը պաշտպանվում ե մեկուսացնող գործիքներով և գոպկալիտյան փամփուշոներ ունեցող հակագաղերով:

Հոդ. 84. Ծուխը կամ գաղերը հեռացնելու համար ձեռք են առնվում հետևյալ միջոցները,—

1) ողափոխում՝ պատուհանները կամ գոները բաց անելու միջոցով,

2) ծուխը հեռացնել կամ թարմ ոդ տալ ծխառեփույրի ոգնությամբ,

3) ծուխը կամ գաղերը բաց թողնել կոնստրուկցիաները քանդելու միջոցով (բաց անել կտուրները, առաստաղները, միջնորմները և այլն):

Հոդ. 85. Շենքերի և կառուցումների կոնստրուկցիաների, ինչպես նաև առանձին առարկաների ու նյութերի բացումը և քանդումը կատարվում ե միայն կարառվի պետի (ավագ պետի) կարգադրությամբ, այն դեպքերում,—

1) յերբ հնարավոր չե հըշիջման միջոցները

գործադրել առանց նախորոք շենքի կամ կասուցման առանձին մասերը բաց անելու կամ քանդելու,

2) յերբ անհրաժեշտ ե ազատման աշխատանքներ կատարել,

3) յերբ անհնարին ե այլ յեղանակներով հեռացնել ծուխը կամ թունակոր գազերը,

4) յերբ խորտակման սպառնալիք ե ստեղծված,

5) անջատումներ ստեղծելու անհրաժեշտության դեպքում, յերբ անհնարին ե այլ յեղանակներով կանխել կրակի տարածումը:

Հոդ. 86. Կոնստրուկցիաները բացելու կամ քանդելու աշխատանքի ծավալը (բացելու տարածությունը և այլն) վորոշվում ե կարառվի պետի (ավագ պետի) կողմից:

Հոդ. 87. Կտուրի բացումը և քանդումը կատարվում ե ծուխը բաց թողնելու համար, վորպեսզի մարտիկները չերդակ անցնեն և անջատում առաջ բերեն ծածկի մեջ՝ յերբ կրակը շարժվում ե չերդակով:

Շենքի չերդակային հարկից ծուխը բաց թողնելու կամ կրակի արտահոսանք ստեղծելու համար կտուրը բացվում ե կատարի վրա, կտուրի՝ յերկու կողմից կամ քամու յենթակա մեկ կողմից վառման աեղին մոտ:

Վորպեսզի մարտիկը փողի հետ միասին կտուրի, վրայով անցնի չերդակ, յեթե հնարավորություն չկա լուսանցույցից (Ըլուխօօ օԿՕ) անցնելու, կտուրը բացվում ե վոչ ավելի քան մեկ քառակուսի մետր տարածությամբ կառնիզից մեկ մետր հեռավորության վրա, և այնպիսի տեղում, վորմարտիկը փողով գործի կրակի տարածման դեմ:

Կտուրի ծածկի բացումը՝ չերդակով կրակի տարածման ժամանակ անջատում ստեղծելու նպատակով, կատարվում ե կտուրի ամբողջ լայնությամբ, ըստ վորում, կտուրի բացումը պետք է ավարտվի ավելի շուտ, քան կրակը աշխատանքի վայրը հասնելը:

Քանդված մասերը դարսվում են կտուրի վրա կամ չերդակում, աշխատանքի վայրի մոտ, իսկ անհրաժեշտ գեպքերում նետվում են ցած:

Հոդ. 88. Պատերի, հատակի, առաստաղի և մյուս կոնստրուկցիաների բացումն ու քանդումը կատարվում ե կրակի թագնված ոջախները հայտաբերելու, ներքին դատարկություններով կրակի տարածման ուղիները փակելու, հրշիջման միջոցները գործադրելու և կրակից վասաված կոնստրուկցիաների փլուզումները և խորտակումները կանխելու համար:

Բոլոր գեպքերում պատերը, հատակը, առաստաղը և մյուս կոնստրուկցիաները բացվում են

միայն այսքան, վորքան անհրաժեշտ ե նշված աշխատանքները լիովին կատարելու համար:

Հոդ. 99. Կոնստրուկցիաների քանդումը՝ կամ մերկացումը՝ հրշիջման միջոցները գործադրելու համար, կատարվում ե միայն այն ժամանակ, յերբ հրշիջման միջոցները դժուար են աշխատանքի տեղում և պատրաստ են գործողության համար:

Հոդ. 100 Կոնստրուկցիաները կրակը հայտնաբերելու և հանդցնելու նպատակով բաց անելը դադարեցվում ե, յերբ հայտնաբերվել են կրակ չտարածված կոնստրուկցիաներ, վորի մասին գեկուցվում ե կարառվի պետին (ավագ պետին):

Հոդ. 101. Ցեթե քանդելու հետևանքով կուտակված նյութերն ու իրերը դժվարացնում են հրդեհը հանդցնելու աշխատանքը, ապա դրանք հեռացվում են աշխատանքի վայրից:

Այդ նյութերն ու իրերը հարկան շենքեր տանելու ժամանակ անհրաժեշտ ե,—

1) թույլ չտալ վոր ծանրաբեռնվեն ծածկերը,
2) քանդված-հավաքված նյութերը դասավորել առավելապես կապիտալ պատերի մոտ,

3) վերացնել դժբախտ պատահարների հնարավորությունը,

4) վերացնել հրդեհաշեջ սարքի փչացման հնարավորությունը,

5) թույլ չտալ վոր գույքը փչանա հարևան շենքերում:

Քանդելու հետևանքով ստացված նյութերն ու իրերը հարկերից, չերդակից կամ կտուրից նետերով հեռացնելու ժամանակ անհրաժեշտ ե,—

1) նախորդը ընտրի նետելու վայրը, դրանք աղատելով շանգագծերից, սանդուղքներից և այլ հրդեհաշեջ սարքից,

2) նետելու վայրի մոտ պոստ սահմանել՝ գըժախտ պատահարները կանխելու համար

3) թույլ չտալ նյութեր և իրեր նետել ելեկտրոլարերի, ծածկերի, պատշգամբների վրա և այլն,

4) ներքեռում գտնվողներին նախազգուշացնել «զգուշացիր» բառով և նյութերը նետել միայն ձեռք առած նախազգուշությունների մասին ներքեցից պատասխան ստանալուց հետո:

Հոդ. 102. Ցերբ կոնստրուկցիաները փլվում են սպառնալով ցած թափել, նրանց թափվելու վայրը շրջապատվում ե, իսկ մոտակայքում աշխատող անձնակաղմը նախազգուշացվում ե կամ հեռացվում:

Հոդ. 103. Շենքերի կոնստրուկցիաները բացելու և քանդելու ժամանակ բոլոր միջոցները ձեռք են առնվում կանխելու համար ջեռուցման և գաղատար կտուցումների փչացումը, ինչպես

հաև հեռախոսային, հեռագրային գծերի և ելեկտրոցանցիք փչացումը:

Հոդ. թէ. Յերբ անհրաժեշտ լինի ցածր լարվածության (մինչև 250 վոլտ) ելեկտրական հոսանքն անջատել և հնարավոր չլինի այդ գործում ոգտագործել անջատող հարմարանքները (ոուրլինին, պրեդուրանիտել և այլն), կարելի յել կտրել ելեկտրոլարերը, բայց անպայման այդ աշխատանքը կատարող մարտիկին պաշտպանելով ռետինե ձեռնոցներով, կրինակոշիկներով և ռետինե գորգիկով:

Հոդ. թէ. Հրդեհի վայրում գտնված ելեկտրական հոսանքով լի ցանցերը և սարքերը կարելի յել անջատել այն գեղքերում, յեթե սարքերը կամ ցանցերը—

- 1) իրենք վառվում են,
- 2) վնասվել են և ստեղծում են հրդեհի միջացման սպառնալիք,
- 3) վտանգ են ստեղծում հրդեհի վրա աշխատողների համար,
- 4) խանգարում են հրդեհը հանգցնելու աշխատանքներին:

Հոդ. թէ. Բարձր լարվածության հոսանքի անջատումը կատարվում է միայն սարքը կամ ցանցը սպասարկող անձնակազմի կողմից:

Հոդ. թէ. Գույքի եվակուացիան կատարվում է

միայն կարառութիւն պետի (ավագ պետի) կարգադրությամբ, հետևյալ գեղքերում,—

1) յերբ գույքը բարդացնում է հրդեհը լիկիդացիայի յենթարկելու աշխատանքը,

2) յերբ հրդեհն անմիջականորեն սպառնում է գույքին:

Հոդ. թէ. Գույքի եվակուացիան կատարվում է բանվորների, ծառայողների, հրդեհի վայրը ժամանած զորամասերի, ԲԴ-միլիցիայի մասերի և բնակչության ուժերով՝ հրդեհաշեջ ստորաբաժանումների առանձնացված հրամանատարների ղեկավարությամբ: Յերբ հնարավոր չե ոգտագործել վերոհիշյալ ուժերը, եվակուացիան կատարվում է հրդեհաշեջ ստորաբաժանումների ուժերով, զորի համար թույլատրվում է կանչել հըրդեհաշեջ պահպանության լրացուցիչ մասեր:

Հոդ. թէ. Եվակուացիան կատարվում է խիստ կազմակերպված կարգով: Գույքը պետք է հոգատար կերպով գուրս հանվի դռան բացվածքներից, յեթե նրանք չեն փակվել կրակով:

Եվակուացիայի յել յենթարկվում առաջին հերթին ամենաարժեքավոր գույքը և սարքավորումը: Եվակուացիայի ճանապարհներն ազատվում են կողմնակի իրերից և անհրաժեշտության գեղքում լուսավորվում են:

Հոդ. թէ. Գույքը եվակուացիայի յենթարկե-

ու ժամանակ կատեգորիկ կերպով արգելվում ե,—

1) անտարբեր և անփույթ վերաբերվել գույշքին,

2) բաց անել պահարանները, դարակները, արկղները, ճամբրուկները և մյուս փակ իրերը,

3) գույքը ցած նետել առանձնապես վերին հարկի պատուհաններից:

Հոդ. 101. Եվակուացիայի յենթարկած գույքը և սարքավորումը կարգով դասավորվում եռ ուղաշապանվում մթնոլորտային տեղումների ներգործությունից, հրդեհաշեջների ջրացայտից և վառվող կոնստրուկցիաները քանդելու ժամանակ՝ փչացումից, և հանձնվում ե ԲԴ-միլիլցիայի կամ հատկապես առանձնացված անձանց պահպանությանը:

Հոդ. 102. Գույքի և սարքավորման եվակիուացիան արտադրական շենքերից կատարվում ե նախորդք մշակված ուղերատիվ պլանի համաձայն:

5. ՄԱՐԴԿԱՆՑ ՈԴՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏԱԼՅ

Հոդ. 103. Ցուրաքանչյուր մարտիկ և հրամանատար պետք ե անհապաղ ոգնություն ցույց տա հրդեհի վայրում տուժած կամ վտանգի տակ

գտնվող մարդկանց, այդ համարելով իր առաջնահերթ պարտականությունը:

Մարդկանց փրկելու յեղանակները վորոշվում են կարառվի պետք (ավագ պետի) կողմից, իսկ անհրաժեշտ դեպքերում՝ բուն փրկողների կողմից:

Հոդ. 104. Վերին հարկերից մարդկանց փրկելու ժամանակ հառաջին հերթին ոգտագործվում են սովորական ճանապարհներն ու յելքերը, վորոնցով գուրս են տարվում կամ փոխադրվում են տուժածները, կամ վտանգի տակ գտնված մարդկերեկ:

Ցեթե սովորական ճանապարհները կրակով կամ ծխով կտրված են և անհնարին ե այդ ճանապարհներով անցնել, փրկելու համար ոգտագործվում են հրդեհաշեջ սանդուղքները կամ փրկման սարքերը:

Հրդեհաշեջ սանդուղքներն ոգտագործվում են այն գեպքում, յեթե փրկվողը գիտակցությունը չի կորցրել և կարող ե ինքնուրույն կերպով իջնել սանդուղքով։ Սանդուղքով ինքնուրույն կերպով իջնելու ժամանակ փրկվող անձնավորությունը կապվում է պահպանող պարանով, վորը բռնում ե փրկողը։

Ցեթե փրկվողը գիտակցությունը կորցրել ե կամ ի վիճակի չե ինքնուրույն կերպով իջնե-

լու, նա պետք ե իջեցվի պարանով կամ ծայրաւ հեղ դեպքում անմիջականորեն փրկողի կողմից իջեցվի սանդուղքով:

Հոդ. 105. Բժշկական ոգնության կարիք ունեցող փրկված անձնավորությունը հանձնվում է բժշկական անձնակազմին: Տեղում բժշկական անձնակազմ չլինելու դեպքում առաջին բուժողականությունը ցույց է տալիս ջոկի դեղաբանի վարիչ մարտիկը:

6. ՀԱՎԱՔՈՒՄԸ ՀՐԴԵՀԻ ԼԻԿՎԻԴԱՑԻՑԻՑ

ՀԵՅՈ

Հոդ. 106. Հրդեհը համարվում է մեկուսացված, յերբ վերացված ե կրակի տարածման հստակվորությունը:

Այդ մոժենտից միաժամանակ կատարվում է կրակի վերջնական լիկվիդացիան հրդեհի բոլոր ոջախներում, լրացուցիչ քանդումը և բացումը, յեթե դրանք անհրաժեշտ են, ինչպես նաև հըրդեհը հանդիսելու հետևանքների լիկվիդացիան (ջրի, վառված կոնստրուկցիաների հեռացումը և այլն):

Հոդ. 107. Վառված կոնստրուկցիաների լրացուցիչ քանդում և բացում կատարվում է միայն—

1) ծխացող կամ վառվող մասեր ու իրեր հայտնաբերելու և գրանք հանդցնելու համար,

2) առանձին տեղամասերի զննումը դժվարացնող խոչընդոտները վերացնելու նպատակով,

3) փլչելու սպառնալիքի դեպքում,

4) շենքերում կուտակված ջուրը հեռացնելու համար:

Հոդ. 108. Մինչև հրդեհի մեկուսացումը կարառվի պետք (ավագ պետք) կարող է հրդեհի վայրից ջոկերը (ստորաբաժանումները) հեռացնել միայն հետեւյալ դեպքերում,—

1) յերբ հրդեհի պարզված իրադրությունը հրդեհի վայրը ժամանած բոլոր ուժերի ոգտագործման անհրաժեշտություն չի պահանջում,

2) յերբ անհրաժեշտ է հրդեհի վայրում աշխատող ստորաբաժանումներին շատպ կերպով ուղարկել ուրիշ հրդեհի վայր:

Հոդ. 109. Վերջնական հավաքման մասին վորոշում կայացվում է միայն հրդեհի վայրն ուշադիր կերպով զննելուց հետո:

Զննելու նպատակն է պարզել—

1) արդյոք լիովին հանդցված են կրակի բոլոր ոչախները,

2) անհրաժեշտություն կամ արդյոք հրդեհի վայրում հրդեհաշեջ պոստ թողնելու,

3) հրդեհի ծագման պատճառը,

4) հրդեհի վլասների մոտավոր գնահատականը:
Հոդ. 110. Յեթե հրդեհի վայրը լրացուցիչ
քանդումից և զննումից հետո յերկյուղ ծագի,
վոր կրակը կարող և վերանորոգվել ապա հըր-
դեհի վայրում պոստ և թողնվում, վորը հայթ-
հայթված և լինում այրումը լիկվիդացիայի յեն-
թարկելու համար անհրաժեշտ միջոցներով:

Պոստի վրա պարտականություն և դրվում,—

1) հսկել հրդեհի ամբողջ տերիտորիայի վրա և
հանգնել այրումները, յեթե դրանք առաջա-
նան,

2) կապ պահպանել իր կարառութիւն ան-
հրաժեշտության դեպքում նրան կանչելու հա-
մար:

Հոդ. 111. Հրդեհը համարվում և լիկվիդացիա-
յի յենթարկված, յերբ վառվելը լիովին դադա-
րեցված և և վերացված և նրա շարունակման ա-
մեն մի հսարափորությունը: Միայն դրանից հե-
տո կարառուն իրավունք ունի հեռանալու հրդե-
հի վայրից: Աշխատանքները գերջանալուց հետո
տրվում և «ավարտ» սիգնալը:

Հոդ. 112. «Ավարտ» սիգնալից հետո մար-
տիկները պարտավոր են,—

1) անջատել շլանգադերը, ջուրը դուրս թա-
փել շլանգներից և դրանք կծկել միատակ կամ
յերկտակ:

2) սանդուղքները հանել գերքերից,

3) հավաքել ոժանդակ գեր կատարող բոլոր
սարքերն ու գործիքները,

4) ամբողջ սարքավորումը և հանդերձանքը
փոխադրել ավտոմեքենաները (ձիաքարշերը),
դասավորել իրենց տեղերը և ամրացնել:

Հոդ. 113. Հավաքման ժամանակ ջոկերի
հրամանատարները պարտավոր են ապահովել
սարքավորման և հանդերձանքի արագ հավաքու-
մը, ստուգել անձնակազմի առկայությունը, ինչ-
պես նաև հրդեհ հանգնելու ժամանակ ոգտա-
գործված բոլոր սարքերի առկայությունը և կա-
նոնավորությունը և կարառութիւնը պետին զեկուցել
մեկնելու համար պատրաստ լինելու մա-
սին:

Հոդ. 114. Կարառութիւն մեկնումը հրդեհի վայ-
րից կատարվում և կարառութիւնը պետի կարգա-
դրությամբ կամ սիգնալով:

Հոդ. 115. Կարառութը (ջոկը) հրդեհաշեջ դե-
պոն վերադառնալուց հետո, կարառութիւնը և
ջոկի հրամանատարները պարտավոր են հետեւ,
վոր ամենակարճ ժամկետում ավտոմեքենաները
(ձիաքարշերը), հրդեհաշեջ սարքավորումը և հան-
դերձանքը լիակատար պատրաստության վի-
ճակի բերքեն և միջոցներ ձեռք առնել չորաց-
նելու կամ փոխելու հրդեհի հանգնմանը մաս-

նակցած մարտիկների շորերը, նրանց ապահովել
լվացվելու համար տաք ջրով, կազմակերպել
հանգիստը և այլն:

ԳԼՈՒԽ V

ԿԱՐԱՊԻԼԻ ՄԱՐՏԱՎԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՈՊ-Ի ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Հոդ. 116. Քաղաքների, բնակելի կետերի և
ոբյեկտների վրա ոդային հարձակում գործելու
ժամանակ հակառակորդը ձգտում է,—

1) ֆուզասային ռումբերի ներգործությամբ
ավերել շենքերն ու կառուցումները,

2) հրձիգ և ֆուզասային ռումբերի ներգործությամբ ստեղծել հրդեհի մասսայական ոջախներ,

3) քիմիական ռումբերի ներգործությամբ
վարակել առանձին տեղամասեր:

Հոդ. 117. Ոդային հարձակման պայմաններում
զգալիորեն բարդանում են հրդեհաշեջ պահպանության խնդիրները կրակի դեմ մղվող պայքարում, վորովճետև մարտական աշխատանքը կատարվելու յեր,

1) հակառակորդի կրակի տակ,

2) դարպանների, մուտքերի, շենքերի և կա-

ռուցումների (ջրմուղ, գազային տնտեսություն,
եկեղեցական ուղղում, կապի ցանց և այլն)
քանդված վիճակում,

3) հրդեհի մասսայական ոջախների առկայության պայմաններում,

4) կայուն թունավոր նյութերով վարակված
տեղամասերի առկայության պայմաններում:

Հոդ. 118. Հրդեհաշեջ ստորաբաժանումները
ՀՈՊ-ի պայմաններում ոգտագործվում են միայն
հրդեհներ հանգչյնելու և վառվող կամ քանդված
շենքերից մարդկանց փրկելու համար:

Ալվագալցաման, սալյորական-վերանորոգչական մյուս աշխատանքները կատարում են հատուկ ստորաբաժանումները: Հրդեհաշեջ ստորաբաժանումները ամենահասարակ սալյորական-վերանորոգչական աշխատանքներում կարող են ոգտագործվել միայն այն դեպքերում, յերբ այդ աշխատանքներն անհրաժեշտ են կատարել մարդկանց փրկելու և հրդեհը հաջողությամբ լիկվիդացիայի յենթարկելու համար,—յերբ հրդեհի տեղում չկան տեղական ՀՈՊ-ի հատուկ ստորաբաժանումները:

Հոդ. 119. ՀՈՊ-ի պայմաններում հարվածի կոմինացված ոջախներում (հրդեհ, ավերածություն, կայուն թունավոր նյութերով վարակված լինելը և այլն) հրդեհաշեջ ստորաբաժա-

նումները պարտավոր են հրդեհը հանգնել տեղական ՀՈՊ-ի մյուս հատուկ ստորաբաժանումների հետ սերտ համագործակցությամբ։ Մարտական համագործակցությունը հետեւալն ե,—

1) միշտ պատրաստ լինել յեղած բոլոր ուժերով ու միջոցներով արագ ու եփեկտիվ ոգնություն ցույց տալու տեղական ՀՈՊ-ի հատուկ ծառայության հարեւան ստորաբաժանմանը,

2) տեղական ՀՈՊ-ի բոլոր ծառայությունների հրդեհաշեջ խմբերն ու ստորաբաժանումները պետք ե աշխատեն միանգամայն համերաշխ, յերբ նրանք համատեղ լիկվիդացիայի յեն յենթարկում հարվածի կոմբինացված ոջախը,

3) անընդհատ ձգտել առավելագույն չափով ոդտագործելու տեղական ՀՈՊ-ի հատուկ ծառայության ստորաբաժանումների տրամադրության տակ յեղած պայքարի տեխնիկական միջոցները, նպատակ ունենալով ընդհանուր հաջողության համար ամենակարճ ժամկետում։

Հոդ. 120. Հրդեհաշեջ ստորաբաժանումների և տեղական ՀՈՊ-ի հատուկ ծառայության ստորաբաժանումների մարտական համագործակցությունը ձեռք ե բերվում դեռ խաղաղ ժամանակ, հարվածի կոմբինացված ոջախները մեկուսացնելու (լոկալիզացիայի) և լիկվիդացիայի յենթարկելու համատեղ գործողություններում անձնակազ-

մը մարզելու միջոցով, ինչպես նաև իրենց վայրերում գործնականորեն մարտական խնդիրներ լուծելու տակտիկական վարժություններ կատարելու միջոցով։

Հոդ. 121. Հրդեհի տեղը գնալու ժամանակ կարառութիւն պետք է ջոկերի հրամանատարները պարտավոր են հետևելու ՀՈՊ-ի ազդանշաններին ու նշաններին, վորոնք ցույց են տալիս թունավոր նյութերով վարակված գոտու սահմանները։

Յեթե գնալու ճանապարհին պատահի թունավոր նյութերով վարակված ճանապարհամաս, ապա կարառութիւն պետք (ջոկի հրամանատարը) անհապաղ հրամայում ե շուրջանցել այդ մասը կամ փոխում ե մարզերուտը։

Հոդ. 122. Այն գեպերում, յերբ վարակված ճանապարհամասի շուրջանցն անհնարին ե, իսկ մարզերուտի փոփոխումը կուշացնի ժամանակին հրդեհի տեղը հասնելը, ստորաբաժանումը վարակված ճանապարհամասն անցնում ե դանդաղ ընթացքով, մեկ ժամում վոչ ավելի քան 5 կիլոմետր արագությամբ, միջոցներ ձեռք առնելով վորպեսդի մեքենան չկեղտութիւն կայուն թունավոր նյութերով։

Վորոշելով հաղթահարել վարակված ճանապարհամասը, կարառութիւն պետք (ջոկի հրամա-

նատարը) մարտիկներին հրաման ե տալիս՝ «Հագւնել հակագաղերը»:

Հոդ. 123. Յերբ քանդվել են ճանապարհները և խոչընդոտներ կան ճանապարհի վրա, կարառւի պետը (ջոկի հրամանատարը) միջոցներ ե ձեռք առնում ճանապարհի այդ մասը շուրջանցելու համար կամ փոխում ե գնալու մարշրուտը:

Հոդ. 124. Յերբ հնարավոր չե շուրջանցել պատահած խոչընդոտը կամ փոխել գնալու մարշրուտը, կարառւի պետը (ջոկի հրամանատարը) միջոցներ ե ձեռք առնում ժամանակավորապես վերանորոգելու ճանապարհամասը, այն չափով, վոր ապահովի մեքենայի անցումը խոչընդոտի վրայով:

Վերանորոգչական աշխատանքներ կատարելու համար կարառւի պետը (ջոկի հրամանատարը) պարտավոր ե այդ աշխատանքում ներդրավել մոտակա տների ինքնապաշտպանության խմբակների անձնակազմը և միայն ծայրահեղ դեպքում ոգտագործել իր ջոկի մարտիկներին:

Հոդ. 125. Յեթե ստորաբաժանումը հրդեհի վայրը գնալու ժամանակ ուրիշ հրդեհ նկատի, ապա նա չպետք ե կանգ առնի և շարունակում ե իր նշանակման վայրը գնալը, սակայն կարառւի պետը (ջոկի հրամանատարը) հրդեհի վայրը համարելուն պես այդ մասին անհապաղ հա-

դորդում ե տեղական ՀՌՊ-ի հրշեջ ծառայության մոտակա շտաբին:

Հոդ. 126. Հրդեհի վայրը հասնելուն պես կարառւի պետը (ջոկի հրամանատարը) տեղական ՀՌՊ-ի քիմիական ստորաբաժանման միջոցով առաջին հերթին պարզում ե, թե վառվող որյեկտի ու ջրի աղբյուրների մոտ կմն արդյոք թունավոր նյութերով վարակված տեղամասեր, ինչպես նաև՝ տեղական քիմիական ստորաբաժանումների կողմից արդեն ապագազգածված տեղամասեր:

Յերբ հրդեհի տեղում քիմիական ստորաբաժանումներ չկան, կարառւի պետը (ջոկի հրամանատարը) հրամայում ե քիմիական հետախուզություն կատարել իր ստորաբաժանման ուժերով միջոցներով:

Քիմիական հետախուզությունը պետք ե պարզի,—

1) վառվող որյեկտի մոտ կամ բուն որյեկտի մեջ վորտեղ թունավոր նյութերով վարակված տեղամասեր կան,

2) ինչ թունավոր նյութերով ե կատարված վարակումը,

3) թունավոր նյութերով վարակված են արդյոք ջրի աղբյուրները կամ նրանց մատուցները:

Հոդ. 127. Վառվող ոբյեկտի սահմաններում
քիմիական հետախուզությունը կատարվում է
հրդեհի հետախուզության հետ միաժամանակ,
իսկ ջրի աղբյուրների և մարտական գործողու-
թյան նշված վայրի քիմիական հետախուզու-
թյան համար կարառվի պետք (ջոկի հրամանա-
տարը) առանձնացնում են մեկ-յերկու մարտիկ:

Հոդ. 128. Ուժերի և միջոցների մարտական
բացազատումը պետք է կատարվի առանց հա-
պաղման, անկախ այն բանից, թե վայրը վա-
րակված է թունավոր նյութերով, թե վոչ:

Կարառվի պետք (ջոկի հրամանատարը) պետք
է ճգտի այն բանին, վորպեսզի գծի պատրաս-
տումը և հրդեհաշեծ սարքավորման դասավորու-
մը, ըստ հնարավորին, կատարվի թունավոր
նյութերով չվարակված տեղամասերում:

Յեթե մարտական գործողությունը ծավալվե-
լու յե թունավորման տեղամասում, ստորաբա-
ժանման ամբողջ անձնակազմը պետք է պաշտ-
պանական հագուստ հագնի:

Հոդ. 129. Թունավոր նյութերով վարակված
տեղամասում աշխատելիս, անձնակազմը, չնայած
թունավոր նյութերից պաշտպանող հագուստ
հագած լինելուն, պետք է առավելագույն զգու-
շություն ցուցաբերի, այսինքն՝

1) առանց հատուկ անհրաժեշտության ձեռք

չտա վարակված իրերի և դրանք չգպցնի
պաշտպանական հագուստին,

2) չանցնի վարակված տեղամասերով, յեթե
հնարավոր ե շուրջանցել դրանք,

3) այն ձեռնոցներով, վորոնցով վարակված
իրեր են վերցվել չդիպցնի իր կամ ընկերոջ
պաշտպանական հագուստին:

4) յեթե խիստ անհրաժեշտ չե, ապա չկանգ-
նի մեքենայի վրանատեղի վրա կամ չմտնի շու-
րիկ կարինան, յեթե դրանից առաջ անցել և
վարակված վայրով:

Հոդ. 130. Հրդեհ հանգնելու ժամանակ ողա-
յին տափնապ ազդանշանից հետո կարառվի պե-
տք (ջոկի հրամանատարը) իր վրա յե վերցնում
տեղական ՀՊՊ-ի տեղական հրդեհաշեծ ստորա-
բաժանումների աշխատանքի ղեկավարությունը,
նայած հրդեհի պայմաններին, դրանք ողտա-
գործելով կրակ մարելու կամ մարդկանց փրկե-
լու համար:

Հոդ. 131. Յեթե հրդեհաշեծ պահպանության
ստորաբաժանումը գործում է հարվածի կոմբի-
նացված ոջախում, կարառվի պետք (ջոկի հրա-
մանատարը) յենթարկվում է այն ղեկավարին,
վորն առանձնացված է տեղական ՀՊՊ-ի շտարի
կողմից և միացնում է հարվածի կոմբինացված
ոջախը լիկվիդացիայի յենթարկելու գործին

մասնակցող բոլոր ուժերի ու միջոցների հրաշանատարությունը:

Կարառութիւն պետը (ջոկի հրամանատարը) հարվածի տվյալ կոմքինացված ոջախում կատարվող ամբողջ ոպերացիայի զեկավարից ընդհանուր մարտական առաջադրանք ե ստանում ըստ մասնագիտության և այն կատարում ե սերտ համագործակցությամբ տեղական ՀՌՊ-ի այլ մասնագիտության խմբերի ու ստորաբաժանումների հետ:

Հօդ. 132. Հրդեհ հանգցնելու պրոցեսը կատարվում ե պահպանելով սույն կանոնագրքի չորրորդ գլուխ՝ կարառութիւն մարտական գործողությունների հիմունքներում շարադրված ցուցումները:

Հօդ. 133. Հրդեհ հանգցնելու աշխատանքի աշխատումից հետո, յեթե այդ աշխատանքը կատարվել ե կայուն թունավոր նյութերով վարակված տեղամասում, այդ աշխատանքին մասնակցած ամբողջ անձնակազմը պետք ե սահմատարական մշակման, իսկ նյութական մասը՝ ախտահանման յենթարկվի:

Հրդեհաշից պահպանության մարդկանց սահմատարական մշակումը և նյութական մասի գեղազացիան կատարվում ե հատուկ հրահանգներում մատնացույց արված կարգով:

ԳԼՈՒԽ VI

ՀՐԴԵՀԱՇԻՋՄԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐԻ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հօդ. 134. Հրդեհաշիջման ղեկավարությունը, նայած հրդեհի չափին և պայմաններին, իրագործվում է,—

1) մեկ կարառութիւն աշխատելու ժամանակ—կարառութիւն պետի (խմբի պետի կամ նրա ոգնականի) կողմից,

2) մի քանի կարառութիւն աշխատելու ժամանակ—այն կարառութիւն պետի (խմբի պետի կամ նրա ոգնականի) կողմից, վորի ուայոնում ծագել ե հրդեհը, մինչև վոր հրդեհի վայրը ժամանի ավագ պետը, վորին ստանձնում ե հրդեհաշիջման ղեկավարությունը, միայն նրա պահանջով:

Հօդ. 135. Հրդեհաշիջման ղեկավարին յենթարկվում են հրդեհի վայրը յեկած հրդեհաշեջ պահպանության բոլոր ստորաբաժանումները, և նա անձամբ պատասխանատու յե նրանց գործունեյության համար՝ հրդեհի վայրում։ Դրա համար ել ուրիշ վոչ վոք իրավունք չունի մի-

ջամտելու նրա կարգադրություններին կամ վերացնելու դրանք:

Հոդ. 136. Մարտական հրամանները և կարգադրությունները արվում են յենթարկման կարգով: Ցեղեր պետը անհրաժեշտ դանի հրամաններ տալ, մի կողմ թողնելով անմիջականորեն իրեն յենթարկվող պետին, նա այդ մասին պետք է անհապաղ տեղյակ պահի վերջինին: Յենթարկյալը, վորն այդպիսի հրաման և ստացել, այն կատարում ե և միաժամանակ այդ հրամանն ստանալու մասին գեկուցում ե իր անմիջական պետին: Ամեն մի մարտական կարգադրության կատարումը պետք է ստուգվի:

Բանագոր կարգադրությունն ստացողը այն բարձրածայն կրկնում և կարգադրություն տվողի առաջ և ձեռնամուխ և լինում կատարմանը:

Հոդ. 137. Ստորաբաժնումները հաջողությամբ դեկավարելու համար, առանձնապես մեծ և բարդ հրդեհներ հանգցնելու ժամանակ, հրդեհի վայրը բաժանվում է մարտական դիրքերի, տեղամասերի և սեկտորների:

Հոդ. 138. Դիրք կոչվում է այն ճիշտ վորոշված տեղը, վորտեղ աշխատում են մեկ ջոկի՝ անմիջականորեն հրդեհ հանգցնելուն մասնակցող մարտիկները, ինչպես նաև այն տեղերը, վորտեղ ամրացված են դործող հիմնական և հա-

տուկ հրդեհաշեջ սպառազինությունները:

Հոդ. 139. Մարտական տեղամասեր և սեկտորներ կազմակերպվում են միայն խոշոր հըրդեհների ժամանակ, վորոնց հանգցնելուն մասնակցում են մի քանի կարառուներ:

Հոդ. 140. Մարտական տեղամաս կոչվում ե այն ճիշտ վորոշված տեղը, վորտեղ, վորպես կանոն, աշխատում են մեկ կարառուլի մարտիկներ:

Մարտական տեղամասերում աշխատող կարառուներն ուժեղացնելու համար այդ տեղամասերին կարող են տրվել ջոկեր՝ ամբողջ կազմով: Զի թույլատրվում ջոկը բաժանել մարտիկների խմբերի և դրանց ամրացնել տարբեր մարտական տեղամասերի:

Հոդ. 141. Մարտական սեկտոր կոչվում ե այն ճիշտ վորոշված տեղը, վորտեղ աշխատում են մի քանի կարառուներ:

Հոդ. 142. Մարտական տեղամասերի և սեկտորների սահմանները վորոշում ե հրդեհաշիջման դեկավարը:

Սահմանները վորոշելիս հաշվի յեն առնվում, —
1) հրդեհի չափը,

2) ստորաբաժնումներին ինքնուրույն տակտիկական խնդիր տալու հնարավորությունը,

3) սեկտորի կամ տեղամասի պետի կողմից

ստորաբաժանումները եֆեկտիվ կերպով կառավարելու հասարակորությունը:

Հոդ. 143. Սեկտորների պետեր նշանակվում են փորձված խմբի պետերը կամ թե վարչությունների կամ հրդեհաշիջ պահպանության բաժինների աշխատակիցները, վոր գտնվում են հրդեհի վայրում: Նրանք յենթարկվում են միայն հրդեհաշիջման ղեկավարին:

Մարտական տեղամասերի պետեր են նշանակվում կարառվածների կամ խմբերի պետերը:

Սեկտորներ լինելու դեպքում մարտական տեղամասերի պետերը յենթարկվում են համապատասխան սեկտորների պետերին, իսկ սեկտորներ չինելու դեպքում՝ անմիջականորեն հրդեհաշիջման ղեկավարին:

Հոդ. 144. Մարտական սեկտորների կամ տեղամասերի պետերը պարտավոր են,—

1) առավել եֆեկտիվ կերպով ոգտագործել ուժերն ու միջոցները՝ հրդեհաշիջման ղեկավարի դրած խնդիրները կատարելու համար,

2) համագործակցություն ու կապ հաստատել ու պահպանել հարևան ստորաբաժանումների ու թիվունքի հետ,

3) յուրաքանչյուր դիրքում կամ տեղամասում անընդհատ հետեւել կրակի տարածման ուղիներին և հրդեհը հանգցնելու պրոցեսին,

4) ազահովել ստորաբաժանումների ազտոտ մաներան սեկտորի կամ տեղամասերի սահմաններում ուժերի ու միջոցների վերախմբավորման արագությունը՝ գործողության պլանը փոփոխելիս,

5) տպահովել անհրաժեշտության գեպքում մարտիկներին ու մեքենաները դիրքից հետ քաշելու ողիները,

6) Հոգատարություն ցույց տալ մարտիկների առողջության և կյանքի պահպանման, ինչպես նաև նյութական մասը խնայելու համար:

Հոդ. 145. Հրդեհաշիջման ղեկավարի խնդիրներ,—

1) ուշագիր կերպով հետախուզել հրդեհի իրադրությունը,

2) ճիշտ գնահատել իրադրությունը, հաշվել հրդեհը հանգցնելու համար անհրաժեշտ ուժերն ու միջոցները և վորոշում ընդունել,

3) մարտական խնդիրներ տալ ստորաբաժանումներին և հետեւել դրանց կատարմանը,

4) անընդհատ դիտել հրդեհի իրադրության փոփոխություններին և լրացուցիչ վորոշումներ ընդունել:

Հոդ. 146. Հրդեհաշիջման ղեկավարը, նախքան վերջնական վորոշում ընդունելը, պետք ե ամենայն ուշադրությամբ հետախուզի և գնահա-

տի հրդեհի իրադրությունը։ Յեթե հրդեհի իրադրությունը ճիշտ զնահատվի, ապա դա հնարավորություն կտա անսխալ ընտրելու գլխավոր հարվածի ուղղությունը և նպատակահարմար ոգտագործելու հրդեհաշիջման առկա ուժերն ու միջոցները։

Հոդ. Ա. Այն դեպքում, յերբ հրդեհի հետախուզման ժամանակ պարզվի վոր անհրաժեշտ ե փրկել մարդկանց, ապա հրդեհաշիջման ղեկավարը պարտավոր և անհապաղ անհրաժեշտ միջոցներ և ուժեր առանձնացնել և անձամբ ղեկավարել փրկության ոպերացիան, կամ թե, բացառիկ դեպքերում, փրկության ղեկավարությունը հանձնարարել փորձված հրամանատարներից մեկին։

Մարդկանց փրկելու ժամանակ այն ստորաբաժանումները, վորոնք չեն մասնակցում փրկությանը, պետք և իրենց գործողություններով ոգնություն ցույց տան փրկողներին և ապահովեն փրկման ոպերացիայի հաջողությանը։

Հոդ. Ա. Հրդեհաշիջման ղեկավարի ընդունած վորոշման մեջ նախատեսվում ե, —

1) վոր ուղղությամբ պետք և հասցվի գլխավոր հարվածը,

2) առկա ուժերի բաշխումն ըստ մարտական տեղամասերի (սեկտորների),

3) յուրաքանչյուր մարտական տեղամասի (սեկտորի) խնդիրները և յելման դիրքերը,

4) լրացուցիչ ոգնություն կանչելու անհրաժեշտությունը (մեկնումի բարձր համար տալը),

5) վոր ստորաբաժանումներն են առանձնացվում վորպես ոեգերվ։

Հոդ. Ա. Այն դեպքում, յերբ ուժերն ու միջոցները անբավարար են հրդեհը հանգստնելու համար, հրդեհաշիջման ղեկավարը լրացուցիչ ուժեր և կանչում աշխատող ստորաբաժանումներին ոգնելու համար, սահմանված չվացուցակի համաձայն բարձրացնելով մեկնումի համարը կամ կանչում և հատուկ ծառայության ուժեր։

Լրացուցիչ ուժեր կանչելու վորոշում ընդունելով, հրդեհաշիջման ղեկավարը պետք և յենի գործողության մեջ միաժամանակ անհրաժեշտ ուժեր ու միջոցներ մտցնելու շնորհիվ հրդեհն ամենաարագ կերպով լիկվիդացիայի յենթարկելու անհրաժեշտությունից։

Հոդ. Ա. Լրացուցիչ ոգնություն կանչելով հրդեհաշիջման ղեկավարը բոլոր դեպքերում պարտավոր և ստորաբաժանումներին դիմավորելու համար, նայած կանչված խմբերի թվին, ուղարկել կապավորներ (մարտիկներ կամ հրամանատարներ), վորոնց խնդիրն ե, —

1) ցույց տալ ջրի աղբյուրի վայրը, վորտեղ
պետք են նասոս դրվի,

2) ցույց տալ հրդեհի այն տեղամասը (դիրքը),
վորը պետք են գրավի ստորաբաժանումը,

3) ստորաբաժանմանը հայտնել մարտական
խնդիրը:

Հոդ. 151. Հրդեհաշիջման ղեկավարն ընդու-
նած վորոշումը կենսագործում, և ստորաբաժա-
նումների հրամանատարներին անձամբ կամ կա-
պավորների միջոցով առանձին մարտական խըն-
դիրներ տալու ճանապարհով:

Ստորաբաժանումների հրամանատարներին
մարտական խնդիրներ տալու ժամանակ նախա-
տեսվում են,—

- 1) աշխատանքի նպատակն ու բնույթը,
- 2) յիշման դիրքերը և ուղիները՝ հարկադիր
նահանջի դեպքում,
- 3) ստորաբաժանումների միջև գոյություն ու-
նեցող կապի յեղանակները,
- 4) նախազգուշության միջոցառումները,
- 5) իր գոնվելու վայրը:

Հոդ. 152. Նախնական հետախուզություն կա-
տարելուց բացի, յուրաքանչյուր պետ-հրամա-
նատար իր տեղակասում, հրդեհը հանգնելու
մեջով շրջանում, շարունակում և անընդհատ
ուսումնասիրել իրադրությունը: Իրադրության

փոփոխման վերաբերյալ բոլոր տեղեկություննե-
րը, ով ել վոր ստանա դրանք, անհապաղ հա-
ղորդվում են վերադաս պետին:

Հոդ. 153. Ցեղե հրդեհը հանգնելու շրջա-
նում հետախուզության ստացած տեղեկություննե-
րներն ընդունված վորոշումը փոփոխելու անհրա-
ժեշտություն առաջ բերեն, հրդեհաշիջման ղե-
կավարը պարտավոր ե անհապաղ լրացուցիչ վո-
րոշում ընդունել և այն կենսագործել:

Հոդ. 154. Նախնական վորոշումը փոփոխե-
լու ժամանակ պետք ե խուսափել գործող ստո-
րաբաժանումների տեղափոխություններից և,
հրդեհի տարածման սպաւնալիքի դեպքերում,
պետք ե մարտական աշխատանքի մեջ մտցնել
յեղած ոեզերմները կամ ոգնության կանչված
ստորաբաժանումները:

Հոդ. 155. Հիմնական ուժերի և միջոցների
դասավորությունը կարելի յե փոփոխել միայն
հրդեհաշիջման ղեկավարի կամ սեկտորի պետի
հրամանով:

Հոդ. 156. Գրաված դիրքերից ստորաբաժա-
նումների հեռացումը կատարվում և այն ղեպքե-
րում, յերբ այդ դիրքերում աշխատանքի շարու-
նակումը, շնորի քանդվելու, պայթյունների,
թունավորման պատճառով և այլն, սպառնում և
անձնակազմի կյանքին և չի արդարացվում վառ-

վող ոքյեկտի արժեքավորությամբ կամ հրդեհի իրադրությամբ:

Հոդ. 157. Մարտական դիրքերից ստորաբաժնութերի հեռանալու ժամանակ մարտական տեղամասի կամ սեկտորի պետը պարտավոր ե, —

1) մատնացույց անել այն դիրքերը գնալու ուղիները, յեղանակները և հերթականությունը, վորտեղ պետք ե կենտրոնացվեն ուժերն ու միջոցները հետագա հարձակման համար,

2) նահանջի մասին հայտնել հարևան տեղամաս—սեկտորներում աշխատողներին,

3) զեկավարել ստորաբաժանման նահանջը, սխտեմատիկաբար ստուգելով մարդկանց առկայությունը ստորաբաժանութերում, մարդկանց պակաս նկատելու դեպքում անհապաղ միջոցներ ձեռք առնել դրանց վորոնման համար,

4) արագությամբ գնահատել նոր իրադրությունը, ընդունել համապատասխան վորոշում և ուժերն ու միջոցները վերախմբավորելու խնդիր տալ ստորաբաժանութերին՝ կրկին անգամ հարձակում կատարելու համար:

Հոդ. 158. Նահանջը վերջանալուց հետո, նահանջը զեկավարող պետը հրդեհաշիջման զեկավարին անհապաղ զեկուցում ե, թե ինչպես ե կատարված նահանջը և թե ինքն ինչ կարգա-

դրություններ ե արել կրկին անգամ հարձակում կազմակերպելու համար:

Հոդ. 159. Հրդեհաշիջման զեկավարն իր գըտնըվելու վայրը (հրամանատարական կետը) ընտրում ե, —

1) հրդեհի առավել պատասխանատու տեղամասին մոտիկ,

2) վառվող ոքյեկտի ավելի մեծ տարածություն (ծավալ)՝ լավագույն կերպով տեսողության նկատառումով,

3) անձնակաղմի համար առավել տեսանելի վայր:

Հրդեհաշիջման զեկավարը կարող ե փոխել հրամանատարական կետը կամ շրջադարձել հրդեհի ոքյեկտը, իր գտնվելու վայրի կամ շրթման ուղղության մասին տեղյակ պահելով շտաբին կամ անմեջականորեն մարտական տեղամասերի (սեկտորների) պետերին:

ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՇՏԱԲԸ

Հոդ. 160. Յերբ հրդեհը հանգժնելու վրա աշխատում են ավելի քան յերեք կարառությերի հրդեհաշիջման զեկավարին կից կազմակերպվում ե զեկավարման շտաբ, վորի կազմի մեջ մտնում են շտաբի պետը, շտաբի պետք ոգնականը և

թիկունքի պետը՝ նախորոք նշանակված հրամանատարական կազմից:

Հոդ. 161. Շտաբի հիմնական խնդիրն եւ հըբդեհաշիջման ղեկավարի ընդունած վորոշման համապատասխան կազմակերպել և ապահովել հրդեհաշեջ խմբերի հրդեհը հանգցնելու մարտական աշխատանքը:

Հոդ. 162. Շտաբը պետք եւ,—

1) հրդեհի վայրը ժամանող ստորաբաժանումները բաշխի ըստ մարտական տեղամասերի և սեկտորների և նրանց կոնկրետ խնդիրներ առաջադրի՝ համապատասխան հրդեհաշիջման ղեկավարի ընդունած վորոշման,

2) առանձնացնի ուժերի և միջոցների ոեղերվ՝ հրդեհի վայրում իրադրության փոփոխման ժամանակ վտանգավոր տեղամասերը ժամանակին ապահովելու կամ ուժեղացնելու համար,

3) ապահովի նասումների դասավորումը ջրի աղբյուրների վրա,

4) ապահովի հրդեհի վայրի լուսավորումը դիշեր ժամանակ,

5) կազմակերպի բժշկական անհետաձգելի ոգության կայան,

6) կապ հաստատի ջրմուղի, ելեքտրական և գազի կայանների, ինչպես նաև ԲԴ Միլիոնի հերթապահների հետ,

7) ժամանակին մեկնումի բարձրացված համարներ տա կամ հասուլ ծառայության ուժեր կանչի հրդեհի վայրը,

8) անընդհատ կապ հաստատի մի կողմից շտաբի և հրդեհաշիջման ղեկավարի միջև, մյուս կողմից մարտական սեկտորների, տեղամասերի պետերի և թիկունքի պետի միջև, ինչպես հրդեհի վայրի և քաղաքի (որյեկտի) հրդեհաշեջ պահպանության կազմի կենտրոնական կայանի միջև,

9) հրդեհաշիջման ղեկավարի կարգադրությունները ժամանակին հաղորդի սեկտորների և տեղամասերի պետերին, ինչպես նաև լրացուցիչ կանչով հրդեհի վայրը ժամանած ստորաբաժանումների պետերին, և ապահովի տրված կարգադրությունների կատարման հսկողությունը,

10) կազմակերպի հրդեհի վայրի հրամանատարական անընդհատ հետախուզությունը, հավաքի ու գումարի հրդեհը հանգցնելու ընթացքի վերաբերյալ տեղեկությունները և այդ տեղեկությունները ժամանակին հաղորդի հրդեհաշիջման ղեկավարին՝ հրդեհաշիջման նախնական պլանի մեջ ուղղումներ մտցնելու վերաբերյալ վորոշումներ կայացնելու համար,

11) կազմակերպի արժեքավոր գույքի եվակուացիան վառվող որյեկտի վայրից,

12) հրդեհի վայրում աշխատող ստորաբաժա-

նումներին ապահովի նյութական միջոցներով
անխափան աշխատելու համար, և հրդեհի վայ-
րում յերկար ժամանակ աշխատող ուժերն ու
միջոցները ժամանակին փոխարինի ռեզերվային
ուժերով ու միջոցներով,

13) համապատասխան կազմակերպություննե-
րին ժամանակին տեղեկություն տա հրդեհաշխա-
ման ընթացքի մասին,

14) կազմի հրդեհաշխաման ընթացքի սխեմը,
մատնացույց անելով հրդեհաշխաման ուժերի ու
միջոցների դասավորումը և կանչով նրանց ժա-
մանելու ժամանակը, պարզի հրդեհի պատճառ-
ները և ակտ կազմելու համար հավաքի անհրա-
ժեշտ տեղեկությունները:

Հոդ. 163. Լրացուցիչ կանչով հրդեհի վայրը
ժամանած ստորաբաժանումների պետերը պար-
տավոր են ներկայանալ շտաբը՝ առաջադրանք-
ներ ստանալու համար:

Հոդ. 164. Լրացուցիչ կանչով ժամանած ստո-
րաբաժանումների անձնակազմը և շտաբի պետի
կողմից վորպես ռեզերվ առանձնացվածները
գտնվում են ավտոմեքենաների (ձիաքարշերի)
մոտ, գործողության համար մշտապես պատրաստ:
Զմեռ ժամանակ ռեզերվը տեղավորվում և շտա-
բի հետ կապ ունեցող փակ շենքում:

Հոդ. 165. Շտաբի պետի տրամադրության

տակ գտնվում են, — կապի սպասարկությունը,
ստորաբաժանումների հատուկ սպասավորության
կողմից շտաբ գործուղված կապավորները և սա-
նիտարական ծառայություն:

Հոդ. 166. Շտաբը տեղավորվում և հրդեհի
պատասխանառու տեղամասերի մոտ:

Կապի սպասարկության ավտոմեքենա լինելու
դեպքում շտաբը գտնվում է վերջինիս մեջ:

Ցերեկը շտաբի գտնվելու վայրը նշվում է կար-
միր գրոշով, գիշերը՝ լապտերով:

Հոդ. 167. Կապը հրդեհի վայրում իրագործ-
վում է, —

1) ոռոգորի կամ ռեզորտուկտորի միջոցով
ձայնով կարգադրություններ տալով,

2) մարտական կամ ոժանդակ մեքենաների
մարտական անձնակազմից առանձնացված կա-
պավորների միջոցով,

3) հնչյունային, լուսարձակային կամ համար-
ազդանշաններ տալու միջոցով:

4) հեռախոսների կամ ուղիղուսարքավորումներ
միջոցով:

Հոդ. 168. Հրդեհը գիշերով հանդցնելու ժամա-
նակ, ինչպես նաև մառախուղի կամ ուժեղ ծխա-
կալման դեպքում, հրդեհի վայրը լուսավորվում
է ելեքտրոլուսարձակներով կամ ակումբույ-
տորային ելեքտրոլապտերներով, իսկ գրանց

չլինելու դեպքում—ջահերով ու լապտերներով։ Լուսավորման յենթակա յեն առավել կարևոր դիրքերը, վառվող ոբյեկտի մատուցները և հըսդեմաշիշման ուայսնի հաղորդակցության ճանապարհները։ Լուսավորումը պետք է ապահովի լավ տեսանելիությունը և մարտիկների ու հրամանատարների նորմալ աշխատանքը հրդեհի հիմնական տեղամասերում։

Հոդ. 169. Հրդեհի վայրում բժշկական անհետաձգելի ոգնությունը ցույց է տալիս շտաբում գտնվող բուժակը (բուժակ չլինելու դեպքում՝ մարտիկ սանիտարը)։ Բուժակի պարտականությունն է ոգնություն ցույց տալ այրվածքի, ջարդվածքի և փիրավորվելու դեպքում, ինչպես նաև արհեստական չնչառություն կատարել։

Հոդ. 170. Վառվող ոբյեկտից բոլոր փրկվածներին, ինչպես նաև բժշկական ոգնության կարիք ունեցող մարտիկներին ու հրամանատարներին շտաբի պետը հանձնում է շտապ ոգնության կամ սանիտարական սպասարկության բուժանձնակազմին։

3. Թիկունքը

Հոդ. 171. Հրդեհում գործող ստորաբաժանումների թիկունքը կազմակերպվում է միայն հրդեհաշիշման շտաբ լինելու դեպքում։

Հոդ. 172. Թիկունքի հիմնական խնդիրն են դործող ստորաբաժանումներին ժամանակին նյութապես ապահովել հրդեհ հանգցնելու համար անհրաժեշտ պարագաներով։

Հոդ. 173. Թիկունքի պետին անմիջականորեն յենթարկվում են հրդեհի վայրում գտնված բուժրու ոժանդակ ուժերը։

Հոդ. 174. Թիկունքի պետը պարտավոր է,—

1) մարտական տեղամասերը և դիրքերը, հըսդեհն հանգցնող ստորաբաժանումների պետերի պահանջով, ապահովել հրդեհաշիշման համար անհրաժեշտ գործիքների ու միջոցների պաշարով, —փրկրափոշիով, ջրով, ցիստերներով կամ տակառներով, շանգների միջոցով և այլն,

2) հրդեհի վայրում ավտոմեքենաների յերկար ժամանակ աշխատելու դեպքում դրանց ապահովել յուղանյութով և վառելանյութով,

3) կազմակերպել ջրի աղբյուրների հետախուզություն, կապ հաստատել ջրմուղի կայանի հետ՝ մագիստրալում ճնշումն ուժեղացնելու համար,

4) կազմակերպել ռեզերվի ավտոմեքենաների (ձիաքաղերի), ինչպես նաև ոժանդակ ու մարդատար ավտոմեքենաների կանգը, չխանգարելու փողոցի շարժումը,

5) յերկար ժամանակ հրդեհի վայրում աշխա-

տող անձնակազմը ապահովել սննդով և խմելու ջրով,

6) կազմակերպել թռչված և սառած շլանգների փոխադրումը հրդեհի վայրից,

7) ձմեռ ժամանակ կազմակերպել մարտիկներին չոր հագուստ հազգնելու կետ և դաժան ցրտերի ժամանակ անձնակազմը հրդեհի վայրից փոխադրել փակ մեքենաներով:

ԳԼՈՒԽ VIL

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ՀՐԴԵԼԱՇԵՋ ՊԱՀ- ՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՏՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Հոդ. 175. Հրդեհաշեջ պահպանության մարտական գործողություններն ապահովելու ուղղությամբ կատարված ամենորյա քաղաքական աշխատանքը պետք ե բոլոր մարտիկներին ու հրամանատարներին համախմբի Լենինի-Ստալինի կուսակցության և Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Կառավարության շուրջը: Քաղաքական աշխատանքը պետք ե յուրաքանչյուր մարտիկի և հրամանատարի մեջ սեր դաստիարակի դեպի մեր սոցիալիստական հայրենիքը և մշտական պատրաստակամու-

թյուն՝ հրդեհից պաշտպանելու սոցիալիստական և քաղաքացիների անձնական սեփականությունը, այդ գործում ցուցաբերելով համարձակություն, անձնվիրություն ու նախաձեռնություն, վոր հիմնված լինի գիտակցական կարգապահության վրա, և հրդեհաշիջման ժամանակ մարտական իրադրության բոլոր զրկանքները տոկունորեն տանելու պարտականություն:

Հոդ. 176. Հրդեհաշեջ պահպանության մեջ քաղաքական աշխատանքը կազմակերպում և վարում ե քաղաքական ապարատը: Իրենց մասերում (ստորաբաժանումներում) քաղաքական աշխատանքը պետք ե վարի մասերի քաղաքական և պետկազմը:

Հոդ. 177. Քաղաքական կազմը պետք ե սերտարեն կապված լինի իր մասի անձնակազմի հետ, ամեն որ հոգ տանի նրա մասին, պետք ե գիտենա մարտիկների տրամադրությունները, կարիքները և պահանջմունքները, պետք ե ամենուրեք և ամեն բանում քաղաքական բարձր գիտակցության ու գգոնության, նախաձեռնության և վճռականության որինակ ծառայի:

Հոդ. 178. Քաղաքական ապարատը և քաղաքատողները պարտավոր են ամենորյա հոգատարություն ցույց տալ մասերի ամբողջ հական հրդեհային սարքը և հրդեհաշիջման միջոցները

կարգին վիճակում պահելու ժամին և հետևել այն
բանին, վոր հրդեհ հանդցնելու ժամանակ մա-
սերն ապահովված լինեն աշխատանքի համար
անհրաժեշտ բոլոր պարագաներով:

Հոդ. 179. Պետ. և քաղկազմը պարտավոր ե
առաջին հերթին կազմակերպել և անձամբ ղե-
կավարել վառվոր շենքերում մնացած մարդկանց
փրկության աշխատանքները:

Հոդ. 180. Պետ. և քաղկազմը պետք ե ապա-
հովի հրդեհ հանդցնելու վրա աշխատող մարտիկ-
ների ուղղի փոխհարաբերությունը բնակչության
հետ և ԲԳ Միլիցիայի որդանների հետ միասին
ամեն կերպ ոժանդակի սոցիալիստական սեփա-
կանության և քաղաքացիների անձնական գույշ-
քի փրկությանն ու պահպանմանը՝ փչացումից և
հափշտակումից:

Հոդ. 181. Հրդեհաշիջման ժամանակ քաղա-
քական աշխատողները և հրամանատարները
պետք ե լինեն այնտեղ, վորտեղ պահանջում ե
անձնվերության և հերոսության անձնական ո-
րինակ:

Հոդ. 182. Հրդեհի ժամանակ քաղաքական և
պետկազմը բոլոր միջոցները ձեռք ե առնում,
վորպեսզի թույլ չտա կամ զաղարեցնի խուճապը
մարտիկների և բնակչության մեջ:

Հոդ. 183. Յերբ հրդեհաշեջ խմբերն աշխա-

տում են մեծ և յերկարաժակ հրդեհներ հանդցնե-
ու վրա, քաղաքական ապարատը և քաղաքա-
տողները պարտավոր են անհրաժեշտ միջոցներ
ձեռք առնելը —

1) վորպեսզի ժամանակին հրդեհի վայրը հաս-
ցըվեն հրդեհաշիջման բոլոր անհրաժեշտ միջոց-
ները և ոգտագործվեն զրանք,

2) հրդեհի վայրում աշխատող անձնակազմը
ժամանակին ապահովել սննդով և խմելու ջրով,

3) ժամանակին փոխել տալ թրջված հագուստը,
առանձնապես ձեռուային պայմաններում, և անձ-
նակազմի հրդեհի վայրից փոխադրել փակ մեքե-
նաներով,

4) առանձնապես դժվարին պայմաններում
ժամանակին փոխել հրդեհաշիջման աշխատողնե-
րին և կազմակերպել նրանց հանգիստը;

5) ժամանակին բուժողնություն կազմակեր-
պել հրդեհներ տուժածներին:

Հոդ. 184. Հրդեհը լիկվիդացիայի յենթարկե-
լուց հետո քաղաքական ապարատը և քաղաքա-
կան աշխատողները պետք ե բացատրական աշ-
խատանք կատարեն բնակչության մեջ, պրոպա-
գանդա անելով հակահրդեհային միջոցառումնե-
րը, հրդեհը տեղական միջոցներով հանդցնելու
միջոցները, արագ կերպով հրդեհաշեջ խմբեր
կանչելու յեղանակները, միաժամանակ պարզե-

լով բնակչության կարծիքը հրդեհաշեջ խմբի աշ-
խատանքի մասին:

Հոդ. 185. Հրդեհից վերադառնալուց հետո քա-
ղաքական աշխատազները պարտավոր են,—

1) ստուգել հակահրդեհային սարքի ու հան-
գերձանքի վիճակը և բոլոր հնարավոր միջոցնե-
րը ձեռք առնել սարքն ամենաարագ կերպով
հաշվի մեջ մտցնելու համար,


2) բոլոր միջոցները ձեռք առնել հրդեհաշեջ-
ման մասնակցած հրդեհաշեջ խմբի անձնակազ-
մի ուժերը վերականգնելու համար, այն ժամա-
նակին ապահովելով սննդով, լվացվելու տաք
ջրով, հագուստը չորացնելով և կուլտուրական
հանգիստ կազմակերպել նրանց համար:

Հոդ. 186. Քաղաքարատը և քաղաշխատող-
ները պետք ե հանդիսանան հրդեհի վայրում
խմբերի կատարած գործողությունների վերլուծ-
ման կազմակերպիչները, նպատակ ունենալով
դրսեորել տակտիկական խնդիրների լավագույն
լուծումները, գրանք դարձնելով ամբողջ պետ. և
շարքային կազմի սեփականությունը, հայտաբե-
րելով ստախանովյան աշխատանքի լավագույն
մեթոդները, մասսայականացնելով և հրդեհաշեջ
պահպանության բոլոր մասերը փոխադրելով աշ-
խատանքի լավագույն նմուշները:

Հոդ. 187. Քաղաքարատը և քաղաշխատող-

ները պարտավոր են արձանադրել հրդեհի ժա-
մանակ մարտիկների և հրամկազմի կատարած
անձնվեր և հերոսական աշխատանքի բոլոր փաս-
տերը և դրանց մասին անհապաղ հաղորդել վե-
րադաս քաղորդաններին:







ՀՐԱՄԱՆ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
Ք 1 Ո ՐԻԴԱՎԱՐԵԼ ՍՊԱԾԱԿԱՆ ԱԽԱՎԱԿԱՆ
ՅԵՐԱԿԱՆ ԷՎԱԿԱՑԻՈՆ ՍԿՐԱՄԲԱՆ ՀՀ-Ն

Հ.Դ. - Հրաբության Ղեկասան
Ը.Տ. - Ծառ
Ս.Դ. - Սպասող Պօք
Ս.Ի. - Խրամական Պօք
Մ.Տ. - Խրամական Սուրբառության Եղանակ

ՀՐԴԵՐԱՇԵԶՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
ԽԻ: Ձ ՈՐԻՆԱԿԵԼԻ ՍԽԵՄԱ
ԱԿԵԼՔԱՆ Յ ԿԱՐԱԿՈՎ ԱՇԽԱՏԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ



ՀՐԴԵՐԱՇԵԶՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
ԽԻ: Ձ ՈՐԻՆԱԿԵԼԻ ՍԽԵՄԱ
ՅԵՐԿՈՒԿԱՐԱՆ ԿԱՐԱԿՈՎ ԴԵՊԵՇԻ



Թարգմանիչ՝ Հ. Թուրշյան
Պատ. խմբագիր՝ Գ. Մանուկյան
Սրբագրիչ՝ Զ. Շահնազարյան
Կոնտրոլ սրբագրիչ՝ Ա. Բաբայան

Գլավիտելիազոր Ա. — 510 պատվ. № 519. տիրաժ 700

Գետական Համալսարանի Հրատարակչության տպարան

ՀՀ Ազգային գրադարան



NL0276752

13.960

Aug. 2020